



ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ժողովրդավարական ինստիտուցիաների ստեղծման խնդիրը

Յ. ՊՁԾԻ ԶԾ, ԶՍԾՍ

Հայաստանեան մամուլում, սոցիալական ցանցերում շարունակուած է քննարկուել, «ի՞նչ պէտք է անել ստեղծուած իրավիճակից դուրս գալու համար» թեման: Յաճախ նշուում է, որ քաղաքական ուեծիմը չի փոխուել, մինչեւ չբարձրանայ հանրութեան որակը: Այսպիսին, թէզը, որ ամէն ժողովուրդ արժանի է իր ղեկավարներին, շարունակուած է համոզիչ թուալ տատերին: Իսկապէս, ինչո՞ւ, օրինակ, Շուէյցարիայում, հնարաւոր չէ, որ ձեւաւորուի որակական առումով այնպիսի խորհրդարանական մեծամասնութիւն, ինչպիսին Հայաստանում է: Շատերը կ'ասեն, որ եթէ լինեն արդար ընտրութիւններ, ապա հայ ժողովուրդը կը ձեւաւորի շուէյցարական խորհրդարանից ոչ պակաս լաւ Ազգային ժողով:

Միանգամայն չբացառելով դրա հաւանականութիւնը, նշենք, որ ամբողջ ինչորն այն է, որ շուէյցարացիները, ի տարբերութիւն հայաստանցիների, այնպէս են անում, որ ընտրութիւնները ազատ եւ արդար են լինում: Շատերը կ'ասեն, որ շուէյցարացիների նկատմամբ սեփական իշխանութիւնները ուժ չեն կիրառում, նրանց ուղեղները չեն լուանում, կեղծիքներ չեն կատարում, դրա համար էլ նրանք կարողանում են ազատ եւ արդար ընտրութիւններ կազմակերպել: Օրինակ, քաղաքագէտ Արմէն Գրիգորեանը նշում է, որ «եթէ հանրութիւնը ունենայ ժողովրդավարական արժեհամակարգ, իսկ իշխանութիւնը 300 հազար կեղծ անձնագիր, ապա իշխանութիւնը կ'օգտագործի այդ անձնագրերը ընտրութիւնները կեղծելու համար: Արժեհամակարգով հնարաւոր էր լինի կանգնեցնել նման կեղծիքի գործընթացը»:

Իհարկէ, գուտ արժեհամակարգով չես կարող կանգնեցնել նման կեղծիքի գործընթացը, բայց, միգուցէ, արժեհամակարգով կարող ես թոյլ չտալ, որ կեղծիք անող մարդիկ չաչտնուեն իշխանութիւնում: Եւ այստեղ նորից վերադառնանք մեր շուէյցարացիներին՝ ինչո՞ւ նրանց մօտ ի յայտ չեն գալիս այնպիսի մարդիկ, որոնք բռնի ուժով եւ խարդախութեամբ կը ցանկային իշխանութեան գալ եւ չէզոքացնել ընտրութիւնների ինստիտուտը: Կարող ենք ենթադրել, որ վերոնշեալի պատճառն այն է, որ Շուէյցարիայում քաղաքացիների մեծամասնութեան մօտ բարձր իրաւական գիտակցութիւն է, որ նրանք ժողովրդավարական արժեհամակարգի կրող են: Այսինքն, հնարաւոր է, որ քաղաքացիների մօտ չկայ կեղծիք իրականացնելու ցանկութիւն, որ դա նրանց համար անընդունելի է եւ նրանք գիտակցում են, որ միայն հաւասար իրաւունքների, ազատ մրցակցութեան պարագայում կարող են բարգաւաճել եւ ապրել արժանապատիւ կեանքով:

Սակայն, եկէք չբացառենք, որ այնտեղ էլ, միգուցէ, գոյութիւն ունեն քաղաքացիներ, որոնք չունեն իրաւական գիտակցութիւն եւ դէմ չէին լինի վերոնշեալ եղանակով գալ իշխանութեան: Նոյնիսկ մի պահ ենթադրենք, որ այդպիսիները մեծամասնութիւն են: Սակայն այս դէպքում էլ ստացում է, որ Շուէյցարիայում նրանք այդպիսի բան անելու հնարաւորութիւն չկայ: Իսկ ինչո՞ւ այդպիսի հնարաւորութիւն չկայ Շուէյցարիայում: Ըստ Գրիգորեանի, անհրաժեշտ է, որ քաղաքական ուեծերի միջեւ պայքար լինի: «Քաղաքական ուեծերի միջեւ պայքարն էլ իր հերթին ենթադրուում է, որ քաղաքական դաշտում որեւէ ուժ չի կարող եւ չպէտք է ունենայ մենաշնորհ», գրում է նա եւ մէջբերում Դարոն Ասեմողլուին, որն անդրադառնով Անգլիայի ժողովրդավարացման օրինակին, նշել է, որ ժամանակին ունեւորները խորհրդարանի միջոցով կարողացել են գրկել թագաւորին իշխանութեան մենաշնորհից:

Այսինքն, եթէ ընդունենք այս թէզի ճշմարտացիութիւնը, ապա պէտք է նշենք, որ, նախ եւ առաջ, անհրաժեշտ է, որ գոյանան ինչ-որ քաղաքական ուժ կամ ուեծեր, որոնց շահերը չեն համընկնում իշխանութեան մենաշնորհ ունեցողների հետ եւ որոնք ցանկանում են իրաւունքներ ստանալ, որոնց միջոցով կը կարողանան պայտայակել սեփական շահերը: Իսկ ինչպէ՞ս են իշխանութիւնները ճշմարտութիւնը ընդունելու, եթէ իշխանութիւնները իշխանութեան նկատմամբ մենաշնորհ ունեն եւ ստեղծել են այնպիսի խաղի կանոններ, որոնք սպասարկում են միայն իրենց խմբի,

խաւի շահերը: Ստացում է, որ դրանք պէտք է ձեւաւորուեն մոնոպոլիստի կամ քին, ընդունուած խաղի կանոններին հակառակ, քանի որ իշխանութիւնները թոյլ չեն տալու մրցակցութիւն լինի, նրանց խաղի կանոնները բացառում են որեւէ մրցակցութիւն:

Այդ դէպքում ինչպէս են նման ուեծեր ձեւաւորուելու: Ակնյայտ է, որ դա հնարաւոր է միայն կամային գործողութիւն իրականացնելու, այսինքն պայքարի, իշխանութիւնների նկատմամբ ճնշում բանեցնելու միջոցով: Իսկ որպէսզի գոյանայ այդ ճնշումը, անհրաժեշտ է, որ մարդիկ նախ ցանկութիւն ունենան իրաւունքներ ստանալու, այսինքն պէտք է լինեն մարդիկ, որոնք կը գիտակցեն, որ իրաւունքներ ունենալը դա արժէք է, որ առանց դրա իրենք չեն կարող արժանապատիւ ապրել, կամ ընդհանրապէս ապրել: Եթէ չմտածեն, որ դա արժէք է, ապա ինչո՞ւ պէտք է ինքնակամ պայքարեն անարժէք բանի համար եւ վտանգեն իրենց կեանքը, կրեն զրկանքներ եւ այլն:

Կարող ենք նշել, որ պայքարողները մարտահրաւէր են նետում հաստատուած արժեքային համակարգին, ըստ որի իշխանութեան իրաւունք ունի հասարակութեան միայն որոշակի խումբը, շերտը, իսկ մնացածները պէտք է ենթարկուեն վերջինիս: Փաստօրէն նրանք ցանկանում են հաստատել սեփական արժեքային համակարգը, ըստ որի չպէտք է լինի մէկը, որն իշխանութեան նկատմամբ մենաշնորհ ունենայ: Այլ հարց է, թէ ինչպէ՞ս է մարդու մօտ ձեւաւորուում այդպիսի արժեքային համակարգ:

« ՀԱՅՔ »

Թուրքիան առկախել է Հայաստանի հարցը ՄՄ-ում

ՍԶԻՁ՝ ԶԶ, ԶԵԾՍ

Ռուսաստանի էկոնոմիկայի նախարար Ալեքսեյ Ուլխովաեւը Միդնէյում G 20-ի էկոնոմիկայի նախարարների հաւաքից յետոյ յայտարարել է, որ Թուրքիան հետաքրքրուած է Մաքսային Միութեան երկրների հետ ազատ առեւտրի գօտի ստեղծելու հարցով: Նա այդ յայտարարութիւնն արել է Թուրքիայի էկոնոմիկայի նախարարի հետ հանդիպումից յետոյ:

Այդ հեռանկարի մասին նոր չէ, որ խօսուած է: Այդ մասին առաջին անգամ խօսել է Պուտինի խօսնակ Պեկովը, երբ 2012 թուականին Պուտինն այցելել էր Թուրքիա եւ հանդիպել այդ երկրի վարչապետ էրդողանի հետ: Այցից յետոյ հարցազրոյցում Պեկովը յայտարարել էր, որ եթէ Թուրքիան ցուցաբերի ՄՄ-ին միանալու ցանկութիւն, ապա Ռուսաստանը կողջունի այն:

Մէկ տարի անց՝ 2013-ի Նոյեմբերին, Ռուսաստան պատասխան այց կատարած էրդողանը Սանկտ-Պետերբուրգում Պուտինի հետ հանդիպումից յետոյ յայտարարեց, որ Թուրքիան հետաքրքրուած է ՄՄ կամ Եւրասիական միութեան հետ ազատ առեւտրի հեռանկարով: Մինչ այդ, 2013-ի Հոկտեմբերին, Միւնխում ՄՄ վեհաժողովի ժամանակ Թուրքիայի դիմումի մասին յայտարարել էր Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը: Դա այն

վեհաժողովն էր, որում առաջին անգամ Հայաստանի առաջ դրուեց անդամակցութեան Արցախի պայմանը:

Հայաստանի անդամակցութիւնը կը ձգուի առնուազն մէկ տարի: Արդէն յայտարարուած է, որ անդամակցութեան հարցը կը լուծուի Հոկտեմբերի վերջին: Բայց, այդ յայտարարութիւնը որեւէ երաշխիք չէ, որ հենց այդպէս էլ կը լինի: Ոչ այն պատճառով, որ ասողը ընդամէնը Յովիկ Աբրահամեանն էր: Օրեր առաջ նոյն բանը նաեւ Ղազախստանի արտգործնախարարն էր ասել: Խնդիրը այն է, որ Հայաստանի անդամակցութեան հարցը դարձել է ածանցեալ:

Հայաստանի անդամակցութեան հարցը առկախուել է աւելի կարեւոր խնդիրներից, որ ունեն Ռուսաստանը, Ղազախստանն ու Բելառուսը, նաեւ Թուրքիան ու Ատրպէյճանը: Թուրքիայի հետ յարաբերութեան հեռանկարը դրանցից մէկն է, որը թէ տնտեսական, թէ քաղաքական իմաստով հետաքրքրում է Ռուսաստանին ու Ղազախստանին: Բայց, ըստ երեւոյթին դրանք հակընդէմ հետաքրքրութիւններ են: Այսինքն, Մոսկուայի համար Անկարայի հետ պայմանաւորուածութիւնը կարեւոր է Աստանա-Անկարա գործակցային առանցք թոյլ չտալու համար:

Այստեղ հետաքրքրական է դառնում հայ-թուրքական սահմանի խնդիրը: Ինչպէ՞ս կարող է միս

ու արիւն ստանալ Թուրքիա-ՄՄ ազատ առեւտրային յարաբերութիւնը, եթէ Հայաստանի հետ սահմանը լինի փակ: Կը ստացուի, որ Թուրքիան ազատ առեւտրի մէջ է մի կառուցի հետ, որի հետ սահմանը փակ է: Զէ որ ՄՄ-ին անդամակցելու դէպքում հայ-թուրքական սահմանը լինելու է թուրքմաքսային սահման:

Հետեւաբար, կարծես թէ ստացուում է, որ քանի հայ-թուրքական սահմանը փակ է, Թուրքիա-ՄՄ գործակցութիւնն ազատ առեւտրի հասնել չի կարող: Միւս կողմից, կարո՞ղ է արդեօք այդ ազատ առեւտրի գործընթացը յանգեցնել հայ-թուրքական սահմանի բացման: Այստեղ իհարկէ իրավիճակը բարդանում է, քանի որ կայ Արցախի խնդիր, որը Պաքոն միշտ ղնում է Անկարայի առաջ, երբ Թուրքիան փորձում է հայ-թուրքական սահմանի հարցով ունենալ որեւէ էական պայմանաւորուածութիւն որեւէ կենտրոնի հետ: Միաժամանակ, Անկարան ինքն է երեւի թէ հաճոյքով օգտագործում Պաքուի դժգոհութեան գործօնը, քանի որ Թուրքիայի համար էլ հայ-թուրքական սահմանը կարեւոր է Արցախի հետ փաթեթով:

Այդ բարդ իրավիճակում Ռուսաստանի, Ղազախստանի ու Թուրքիայի համար հարցի առաւել դիւրին լուծում կը լինի Հայաստանի անդամակցութեան յետաձգման շա-

ՄԱՍԻՍ
ԾԱՌԱՔԱՌԵՐԹ
Յ. ՊՁԾԻ ԶԶ, ԶԵԾՍ
ԹՅԵՔԵ ԲԶ ԶԶԶԶԶԶԶԶ
...
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY



### ԼՈՒՐԵՐ

## Էդուարդ Նալբանդեանը Միջնորդների Ուշադրությունն է Հրավիրել Ադրբեջանի Գործողությունների Վրայ

Յուլիսի 22-ին աշխատանքային այցելութեամբ Բրիտանիա Ժամանած ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանը հանդիպում է ունեցել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի, Ջեյմս Ուորրիքի, Պիեռ Անդրիոյի եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ ԱնՋէյ Կասպրյիկի հետ:

Հայաստանի արտգործնախարարությունն տարածած հաղորդագրությունն համաձայն, հանդիպմանը շարունակուեցին քննարկումներն ադրբեջանա-դարաբաղեան հակամարտության խաղաղ կարգաւորման գործընթացի առաջ մղման վերաբերեալ:

Հայաստանի արտգործնախարարը միջնորդների ուշադրութիւնն է հրաւիրել վերջին շաբաթների ընթացքում Ադրբեջանի կողմից հնչող ռազմատենչ հռետորաբանութեան, մարդկային զոհերի պատճառ դարձած՝ հրադադարի ռեժիմի խախտումների եւ դիվերսիոն գործունէութեան ակտիվացման վրայ:

«Չնայած միջազգային հանրութեան արդէն հասցնական դարձող կոչերին՝ Ադրբեջանի դեկավարութիւնը շարունակում է իր

ապակառուցողական եւ վտանգաւոր քաղաքականութիւնը, շինծումեղադրանքներով հետապնդելով եւ բանտարկելով հաշտեցման ու խաղաղութեան օգտին արտայայտուող ադրբեջանցիներին, ինչը չի նպաստում բանակցութիւններում դրական միջնորդի ձեւաւորմանը», - ընդգծել է նախարար Նալբանդեանը: Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան դեկավարն ասել է, որ ադրբեջանական իշխանութիւնները փորձում են երկրի ներսում կուտակած կոռուպցիոն փորձն ու հմտութիւնները տեղափոխել միջպետական յարաբերութիւնների մակարդակ, սեփական հանրային կարծիքը մոլորութեան մէջ պահելու նպատակով ջանում են որոշ երկրներից կորզել յայտարարութիւններ, որոնք, գլխիվայր շուռ տալով բանակցային գործընթացի բովանդակութիւնը, վնասում են դրանց առաջընթացին:

Էդուարդ Նալբանդեանը վերահաստատել է, որ Հայաստանը շարունակելու է եռանախագահների հետ համատեղ ջանքերը՝ ուղղուած դարաբաղեան հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորմանը:

## Քաշաթաղի Շրջանում Ականի Պայթիւնից Վիրաւորուածների Վիճակը Ծանր Է

Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանում Յուլիս 20-ին ականի պայթիւնից վիրաւորուած անձանց վիճակը գնահատուած է կայուն ծանր: Նրանք գտնուում են վերականգնման բաժանմունքում, նրանց մօտ ախտորոշուել են տարբեր կտորուածքներ: Այս մասին «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց «էրեբունի» բժշկական կենտրոնի մամուլի խօսնակ Շուշան Յունանեանը:



«ՅՅ ԲՅ ԸՅ ՕՇ Ս Յ Ի Յ Վալ Զ ՍԱՅ Ի Ս»ՍՅՅ Վ

բժշկական կենտրոնի մամուլի խօսնակ Շուշան Յունանեանը:

Վաղ առաւօտեան Քաշաթաղի վաղազին գիւղում Toyota Prado մակնիշի ատոմեքենան պայթել է ականապատ տարածքում, ինչի արդիւնքում վարորդը տեղում մահացել է, իսկ միւս երեք ուղևորները, որոնց թւում նաեւ Արմաւիրի քաղաքապետ Ռուբէն Խլղաթեանը, հոսպիտալացուել են, այնուհետեւ Լեռնային Ղարաբաղից ուղղութիւնով տեղափոխուել Երեւանի «էրեբունի» բժշկական կենտրոն:

Լեռնային Ղարաբաղի արտակարգ իրավիճակների վարչութեան տուեանների համաձայն՝ ականը, որը պայթեցրել է մեքենան, եղել է հակատանկային: Պատահարը տեղի է ունեցել Քաշաթաղի շրջանում գտնուող Վաղազին գիւղի շրջակայքում, որտեղ, ի դէպ, շուրջ մէկ տասնեակ ընտանիք է բնակուած:

Լեռնային Ղարաբաղում ականազերծման աշխատանքներ իրականացնող HALO Trust կազմակերպութիւնից «Ազատութեանը» փոխանցեցին, որ այդ տարածքում իրենք չեն աշխատել, քանի որ

## Փորձագէտ. «Հայաստանը Պէտք Է Արմատապէս Վերանայի Իր Անվտանգութեան քաղաքականութիւնը»

Մինչ Հայաստանի իշխանութիւնները ընդունում են, որ Ուկրաինայի հարցում Արեւմուտք - Ռուսաստան սրուող հակասութիւնները բացասաբար կ'անդրադառնան մեր երկրի անվտանգութեան ապահովման վրայ՝ դժուարացնելով համադրելի արտաքին քաղաքականութիւն վարելը՝ փորձագէտները նախազգուշացնում են, որ մալազիական «Բոխնգի» կործանումից յետոյ Ռուսաստանը կարող է հաւասարեցուել միջազգային ահաբեկչութեանը աջակցող երկրներին, ուստի Մոսկուայի հետ որեւէ յարաբերութիւն աշխարհը

նշուած տարածքում ականների առկայութեան մասին երբեք չէ որեւէ տեղեկութիւն չի ստացուել:

Այն հարցին, թէ արդեօք այդ ականը կարող էր նոր տեղադրուած լինել, HALO Trust կազմակերպութեան ներկայացուցիչ Գալա Դանիլովան դժուարացաւ պատասխանել՝ նշելով, որ յստակ տեղեկութիւն չունեն այդ մասին:

Լեռնային Ղարաբաղի արտակարգ իրավիճակների վարչութեան մամուլի խօսնակ Արմէն Նարիմանեանը «Ազատութեան» հետ զրոյցում ասաց, որ իրենց տուեաններով՝ Քաշաթաղի շրջանի այդ տարածքներում ընդհանուր առմամբ չկան ականապատ դաշտեր, սակայն Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանում այսօր ականի պայթիւնից վիրաւորուած անձանց վիճակը գնահատուած է կայուն ծանր: Նրանք գտնուում են վերականգնման բաժանմունքում, նրանց մօտ ախտորոշուել են տարբեր կտորուածքներ: Այս մասին «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց «էրեբունի» բժշկական կենտրոնի մամուլի խօսնակ Շուշան Յունանեանը:

## Թուրք Ազգայնականները Բողոքում Են, Որ Հայերն Ազատ Շրջում Են Վանում Եւ Կարսում

Հայաստանի հետ սահմանակից Թուրքիայի Իգդիր քաղաքում տեղակայուած եւ ադրբեջանաթուրքական ազգայնականների կողմից ֆինանսաւորուող ASIMDER կոչուող հակահայկական կառույցը կոչ է արել Թուրքական իշխանութիւններին կարսում եւ Վանում ազատ շրջող եւ Հայաստանի դրօշը պարզող զբոսաշրջիկների դէմն առնել:

Թուրքական Haber3 կայքի փոխանցմամբ՝ ASIMDER-ի նախագահ Գիւլքսել Գիւլբէյը դիմել է Կարսի եւ Վանի իշխանութիւններին՝ բողոքելով, թէ ինչու են նրանք թոյլ տալիս, որ Հայաստանից ժամանած խմբերը Կարսի բերդում, Վանի Աղթամար կղզում

Հայաստանի հիմնը երգեն եւ Հայաստանի դրօշը բարձրացնեն:

«Ով է հայերին այդ վստահութիւնը տուել, որ ձեռքերը թափ տալով շրջում են Կարսի եւ Վանի փողոցներում: Եւ վերջում եղաւ սարսափելին՝ Հայկական սփիւռքի եւ հայկական լրբբի աջակցած գործողութիւնը իրականութիւն դարձաւ Կարսի բերդում: Հայաստանից եկած խմբի անդամները Կարսի պարիսպների վրայ Հայաստանի դրօշն են բացել եւ Հայաստանի հիմնը երգել: Նոյն բանը նրանք արել են Վանում: Սրա դէմ պէտք է միջոցառումներ ձեռնարկել եւ դէմն առնել», - ասել է Գիւլբէյը:

## Ադրբեջանցի Դիւերսանտներն Մեղադրանք Է Առաջադրուել

Վերջերս Քարվաճառի տարածք ներխուժած եւ Ղարաբաղի իրաւապահների կողմից ձերբակալուած երկու դիւերսանտներին մեղադրանք է առաջադրուել:

Ղարաբաղի դատախազութեան պաշտօնական տեղեկատուութեան համաձայն, Նոր էրքեջ գիւղի 17-ամեայ բնակիչ Սմբատ Եսկանեանին ու «Նիվա»-ի վարորդ, 42-ամեայ մայր Սարգիս Աբրահամեանին սպանելու, 37-ամեայ Կարինէ Դաւթեանին ծանր վիրաւորելու փաստերի առիթով յարուցուած քրէական գործի շրջանակներում Ադրբեջանի քաղաքացի Դիւհամ Ասկերովին մեղադրանք է առաջադրուել Լեռնային Ղարաբաղի քրէական օրէնսգրքի 7, իսկ նոյն երկրի քաղաքացի Շահբազ Գուլիբէին՝ 5 յօդուածների յատկանիշներով: Նրանք մեղադրուած են ազգային ատելութեան շարժառիթներով մարդուն առեւանգելով սպանելու, կազմակերպուած խմբի կողմից անչափահասի նկատմամբ

գէնքի գործադրմամբ բռնութիւն գործադրելու, լրտեսութեան, Ղարաբաղի պետական սահմանը կազմակերպուած խմբի կողմից հատելու, հրազէն եւ ռազմամթերք կրելու մէջ:

Դիւհամ Ասկերովին նաեւ կազմակերպուած խմբի կողմից ազգային ատելութեան շարժառիթով երկու երկու անձանց սպանութեան փորձի մեղադրանք է առաջադրուել:

Ղարաբաղի դատախազութիւնը շարունակում է նախաքննութիւնը: Ղարաբաղի Պաշտպանութեան բանակը հաւաստիացրել է, որ խումբը ամբողջութեամբ չէզոքացուած է, տեղի բնակիչներին վտանգ չի սպառնում:

Դիւերսիայի փորձը, յիշեցնենք, անցած շաբաթ գուգորդուած էր նաեւ Հայաստանի Տաւուշի մարզի սահմանամերձ գիւղերի գնդակուծութիւններով, հակաուսկորդ սկսել էր կրակել մեծ տրամաչափի գէնքերից՝ վնասելով բնակիչներին տները:

կը դիտի ոչ լեգիտիմ՝ դրանից բխող հետեւանքներով:

«Մենք բազմիցս յայտարարել ենք, որ մենք չենք առաջնորդուած շահերի հակասութիւնների քաղաքականութեամբ: Մենք դէմ ենք ցանկացած տեսակի բաժանարար գծերի քաղաքականութեանը եւ փորձում ենք մեր յարաբերութիւնները կառուցել համադրութիւնների եւ երկարատեւ համագործակցութեան ճանապարհով», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւնների մշտական յանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարեանը (ՀՀԿ):

## Եւրամիութիւնը Կ'ողջունէ

ԵՅ ճաճՅՅ Ի ճճՅ Ի լճ 1-ԷՎ

ներուն համապատասխան», մասնաւորապէս ըսուած է եւրայնանակատար Շտեֆան Ֆրլէյի յայտարարութեան մէջ:

Թրքական լրատուամիջոցներուն համաձայն, Տիւնքի աջին ու զաւակները դիմած էին սահմանադրական դատարան՝ պնդելով, որ բաւարար չափով տեղեկացուած չեն դատական ընթացքին, միեւնոյն ժամանակ նշելով, որ լրագրո-

ղի սպանութեան գործով տարուող քննութիւնը բազմաթիւ թերութիւններով կ'ընթանայ:

Մինչ Սահմանադրական Դատարանի այս որոշումը, իսթանպուլի դատարաններէն մէկը չեղեալ յայտարարեց հայազգի խմբազրայեւտի սպանութեան գործով անցնող եւ պետական պաշտօնէայ հանդիսացող 9 կասկածեալներու նկատմամբ դատական հետապնդումները դադարեցնելու մասին նախկին որոշումը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՇՔԵՂ ՓԱՌԱՏՕՆ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ



Անցեալ Կիրակի, Յուլիսի 20, 2014, Փասատինայի հանրաժանօթ «Վիքթորի» զբօսայգին տօնական շքեղ կերպարանք ստացած էր, ժամադրավայրը դառնալով թէ՛ Փասատինայի եւ թէ՛ շրջակայ քաղաքներէն ժամանած բազմահազար հայերու:

Արդարեւ, 7րդ տարին ըլլալով Փասատինա քաղաքի համագաղութային մարմինը (Armenian Community Coalition) մեծ ձեռնհասութեամբ կը կազմակերպէ արդէն աւանդութիւն դարձած եւ հայութիւնը ի մի համախմբող այս մեծ միջոցառումը:

Տօնական մթնոլորտը կը տիրապետէր զբօսայգիի դալարագեղ տարածքին վրայ: Տասնեակ մը կրպակներու եւ տաղաւարներու կողքին կային նաեւ առանձին յարմարութիւններ մանկա-պատանեկան խաղերու, ճատրակի, դասերու, տարեցններու ժամանցի եւ հանգիս-

նասիկանապետ Ֆիլիբ Սանչեզ եւ ԱՄՆ-ի գոնկրէսի Փասատինայի ներկայացուցիչ ձիւտի Չուն: Բոլորն ալ դրուատեցին շրջանի հայութեան բարեմասնութիւններն ու անոնց բերած օգտաշատ ներդրումը երկրի վերելքին:

Այս առթիւ գոնկրէսական ձիւտի Չուն յատուկ պատուոյ գիրերով պարգեւատրեց Վահէ Աջապահեանը, Անդրանիկ Շահինեանն ու Գէորգ Քէօշկէրեանը առ ի գնահատութիւն իրենց գաղութանուէր ծառայութիւններուն:

Շնորհակալական խօսքով հանդէս եկաւ Փասատինայի համագաղութային մարմնի նախագահ Խաչիկ (Քրիս) Շահինեան: Ան շնորհակալութիւն յայտնեց փառատօնի յաջողութեան սատարողներուն եւ կոչ ուղղեց կառչած մնալ մեր ազգային աւանդութիւններուն եւ

ՏԵՄԻՐԹԱՇ.

«ԹՈՒՐԲԻԱՆ ԵՐԿԵՐԵՍԱՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՎԱՐԷ»



Ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան (ԺԴԿ-ՀԴԲ) կողմէ թուրքիոյ նախագահի թեկնածու առաջադրուած Սելահատտին Տէմիրթաշը նախընտրական քարոզարշաւ կը կատարէ Եւրոպայի մէջ: Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի հրապարակին վրայ հանրահաւաք կազմակերպած Տէմիրթաշը անդրադարձած է շարք մը խնդիրներու:

Տէմիրթաշը դատապարտած է Պաղեստինի դէմ ուղղուած Իսրայէլի ռազմական գործողութիւնները եւ նշած, որ թուրքիան այդ հարցին մէջ երկերեսութիւն կը դրսեւորէ: Մէկ կողմէ կը յայտարարէ, թէ կը ցաւի Կազայի համար, միւս կողմէ Իսրայէլի հետ գէնք-զինամթերքի գործարքներ կը կատարէ:

«Թուրքիոյ կառավարութիւնը Իսրայէլի վրայ պոռալու փոխարէն

թող չեղեալ յայտարարէ այդ պետութեան հետ եղած ռազմա-առեւտրային պայմանագրերն ու զօրավարժու թիւններու մասին համաձայնագրերը», - ըստ «Թայմ թուրք» լրատուական կայքին՝ յայտնած է Տէմիրթաշը:

Վերջինս իր ելոյթի ընթացքին անդրադարձած է նաեւ նախագահի մէկ այլ թեկնածու՝ Ռեջեփ Թայիփ Էրտողանի այն յայտարարութեան, թէ «ԺԴԿ»-ն պէտք չէ աթոռ ունենայ թուրքիոյ խորհրդարանին մէջ: Տէմիրթաշը նշած է, որ Էրտողանի համար «ԺԴԿ»-ականները համերկրացիներ չեն, բացի անկէ Էրտողանի համար անընդունելի գանգուած են հայերը, ալեւինները, ասորիները, եգիպտացիները: Եւ առհասարակ Էրտողանի համար թշնամի են բոլոր անոնք, որոնք իր գլխաւորած կուսակցութեան ձայն չեն տար:

Խուճը մը Նորագիրներու Մուտքը

ԵՅ ճաճՅՅ Ի ձձՅ Լ շԸ 1-ԷԿ

հրաւիրեց նորագիրները իրենց ծառայական օգտակար ներդրումն ունենալ, յառաջիկայ աշխատանքներուն մէջ, ի շահ հայութեան եւ Մայր Հայրենիքին:

Խանդավառ ծափերու ներքեւ նորագիրներու Հնչակեան շարքերը մուտքը շնորհաւորեցին Կեղրոնական վարչութեան եւ շրջանի վարիչ մարմնի ընկերներն ու բոլոր ներկաները:

Երդման հանդիսութեան մասնակիցները այնուհետեւ ուղղուեցան Հ.Կ.Բ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահը ուր տեղի ունեցաւ ընկերային խրախմանք եւ ազգա-

յին երգերու երեկոյ: Այստեղ երեկոն խանդավառեց շնորհալի երգիչ Արնոն եւ իր նուագախումբը: Ուրախ մթնոլորտի ներքեւ տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւններ, մասնաւորաբար Քեսապի եւ սուրիահայութեան համար:

Ընկերա-ընտանեկան գուարթ միջավայրի մէջ խրախմանքը շարունակուեցաւ մինչեւ առաւօտեան ժամերը:



տի այլ յարմարութիւններ:

Փառատօնի ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ համերգ մը, մասնակցութեամբ Գէորգեան եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան տարբեր տարիքի պարախումբերուն, «Փաթիլ» համոյթին, «Կանթեղ» երգչախումբին, ինչպէս նաեւ շնորհալի երգիչներ Նշան Զաղապալանեանի, գէորգ Չազմայեանի, Շիրա Եղիազարեանի եւ Արմէնի, որոնք իրենց ինքնատիպ ելոյթներով տպաւորեցին ներկաները:

Այս առթիւ ողջօջի ելոյթներով հանդէս եկան Փասատինայի Քաղաքապետ Պիլ Պոկարթ, Գալիֆորնիոյ Նահանգային Երեսփոխան Քրիս Հոլտըն, Փասատինայի

ինքնութեան: Ան խօսեցաւ նաեւ 2015 թուականի Յունուարի 1ին կայանալիք տարեկան վարդերու Փառատօնին եւ առաջին անգամ տողանցելիք հայկական ծաղկասալի (Armenian Rose Float) մասին եւ խնդրեց մեր ժողովուրդի աջակցութիւնը այս եզակի ծրագրի յաջողութեան համար:

Յայտագրի հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեցին հայերէն եւ անգլերէն լեզուներով Նայիրի Գրուզեան եւ Սերա Շահինեան:

Տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն, մեծ թիւով ներկաներ ստացան շահեկան նուէրներ:

Կը շնորհաւորենք սոյն յաջող միջոցառման նախաձեռնողներն ու սատարողները:

www.massispost.com daily news updates

Subscription form for Massis Weekly with fields for name, address, city, state, zip code, country, tel, and fax. Includes pricing for USA, Canada, and Overseas.



# ՀԱՅԵԱՅՔ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ 2015 ԹՈՒՎԱԿԱՆԻՑ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԻՆՉ Է ԵՂԵԼ

Լրագրող Սերգար Քորուշուն եւ Արիս Նալջըն, ուսումնասիրելով Հայոց ցեղասպանութեան 50-րդ տարելիցին թուրքիայի մամուլում տեղ գտած լուրերը, հեղինակել են «1965-2015 թուականից 50 տարի առաջ, 1915 թուականից 50 տարի անց» գիրքը:

Գրքի հեղինակներն անդրադառնում են 1965 թ. հայկական սփիւռքի աշխարհի տարբեր ծայրերում կազմակերպած Հայոց ցեղասպանութեան ոգեկոչումներին եւ թէ ինչպէս են այդ լուրերն արտացոլուել թուրքիայի մամուլում:

50 տարի առաջ Ապրիլի 24-ին ինչ կատարուեց, ինչպիսի՞ գարգացումներ ազդեցութիւն ունեցան, միջազգային հասարակական կարծիքն ինչպէ՞ս արձագանքեց Հայոց ցեղասպանութեանը, ոգեկոչման այս արարողութիւններն ու պահանջներն ինչպէ՞ս արտացոլուեցին թուրքիայի մամուլում: Ահա այս հարցերի շուրջ Akunq.net-ը գրուցել է գրքի հեղինակների հետ:

Ձեր գրքի լոյս ընծայումը համընկաւ Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի Ապրիլի 24-ի կապակցութեամբ յղած ցաւակցութեամբ: Կը ներկայացնէ՞ք, թէ ինչի մասին է գիրքը:

**Ս.Ք.-** Յանկացանք նախքան 2015 թ. որեւէ նախագիծ ներկայացնել: 1965 թ. առաջին անգամ միջազգային ասպարէզում յիշատակում են Հայոց ցեղասպանութիւնը: Փորձեցինք պատասխանել, թէ այդ թուականին ե՛ւ միջազգային հարթակում, ե՛ւ թուրքիայում ինչեր կատարուեցին, Անկարան ինչպիսի վերաբերմունք ցուցաբերեց, թուրքիայի մամուլում ինչպիսի արձագանք ունեցաւ: Ահա մամուլից ծաղկաբաղ կատարելով՝ ցանկացանք ցոյց տալ, որ 50-ամեակին սա տեղի ունեցաւ, 100-ամեակին էլ կարող է տեղի ունենալ: Գիրքն ընթերցելիս էլ կը տեսնէք, որ 1965 թ. ստեղծուած թեզերը թուրքիան 49 տարի շարունակ օգտագործում է եւ կարծես թէ 50-րդ տարում էլ շարունակելու է օգտագործել:

**Ա.Ն.-** Երբ պատրաստում էինք գիրքը, չէինք կարծում, որ նման ցաւակցական հաղորդագրութիւն է լինելու: Փորձեցինք գիրքը լոյս ընծայել Ապրիլի 24-ին, այդպէս էլ եղաւ, սակայն չուզեցինք թողել 2015 թուականին: Նախքան 100-ամեակը մարդիկ թող կարդան եւ իմանան, թէ ինչ է կատարուում: Երբ սկսեցինք ուսումնասիրել այս թեման, սկզբում շատ տեղեկութիւն չունէինք, նախ՝ մտածեցինք յօդուած գրել, այնուհետեւ՝ գեկոյց, սակայն ուսումնասիրութեան ընթացքում հանդիպեցինք այն շրջանին, երբ առաջ են քաշուել թուրքական պատմական թէզերը: Այս թէզը առաջ է քաշուել 1965 թ., քանի որ սփիւռքն այդ ժամանակ է սկսում ցեղասպանութիւն բառն օգտագործել: Պատկերացրէ՞ք՝ առաջին անգամ սկսում են օգտագործել ջենոսիդ բառը, թուրքիայի մամուլում էլ են գործածում այն, թէեւ չգիտէին, թէ ինչ է իմաստ է պարունակում: Եւ ահա դրանից յետոյ առաջ են քաշուած թէզեր ու արտայայտութիւններ:

Ըստ հուլիսի գրքի լոյս ընծայումը համընկաւ ցաւակցական հաղորդագրութեանը: Վարչապետ Ռ. Թ. էրդողանի ցաւակցութիւնը ցոյց տուեց, որ 49 տարի



առաջ՝ 1965 թ., տեղի ունեցածը այսօր թուրքիայում կրկին նույնութեամբ շարունակում է. ո՛չ թէզում փոփոխութիւն կայ, ո՛չ էլ արտայայտութիւններում: Ըստ իս՝ միակ տարբերութիւնը լեզուն է: Քանի որ այն ժամանակ ատելութիւն էր սերմանում, կամաց-կամաց դրա սկիզբն էլ է դրւում: Այսպէս, օրինակ, անգամ տարբեր է թուրքականութեան եւ քաղաքացիութեան մասին սահմանումը: 1965 թ. իւրաքանչիւր քաղաքացի թուրք էր ընկալւում, իսկ այսօր թուրքիայի Հանրապետութեան քաղաքացի ենք ասում:

Այն, որ վարչապետի ցաւակցական հաղորդագրութիւնից յետոյ «լաւ հայեր» յայտնուեցին եւ շնորհակալութիւն յայտնեցին, նույնութեամբ տեղի է ունեցել նաեւ 1965 թ.: Ոգեկոչման միջոցառումները Լիբանանից են սկսւում: Կրկին մի խումբ հայեր թերթերին նամակ են գրում՝ ասելով՝ «Թող հայերը լռեն», «Արեւմտեան Հայաստանը պատրանք է», «Սա տենդ, հիւանդագին գաղափար է» եւ այլն: Եւ այս ամէնն ասում են հայերը:

**Ս.Ք.-** Ըստ հուլիսի ստիպում են ասել: Այո՞, «լաւ հայեր» կան, որովհետեւ նրանց ստիպում են ասել:

Այս առումով շատ կարեւոր է Ջիւնեթ Արջաիւրեքի՝ «Հիւրիչէթ» թերթում լոյս տեսած յօդուածը: Նախ՝ պատասխանում է սփիւռքին, յետոյ էլ ասում, որ այս ամէնի ամենալաւ պատասխանը թուրքիայի հայերն են տալու:

**Ա.Ն.-** Յաջողութեամբ էլ թուրքիայի հայերը յանկարծակի սկսում են նամակ գրել: Կեղծ նամակներ չեն, բոլորի անունները ճիշտ են: Այդ նամակները գրել ու մտայնութիւնն էլ 1915 թ. ի վեր թուրքիայում մնացած հայերի անհանգիստ եւ հիւանդ հոգեբանութեան արդիւնքն է, ողբերգութեան մէջ են եւ սա կատարում են առանց հասկանալու: Ուսումնասիրելուց յետոյ ինքս ինձ հարցրեցի՝ «Լա՛ւ, այսքա՛ն, արդեօ՞ք չենհասկանում»: Սակայն նոյն բանն այսօր էլ են կատարում: Կարծում եմ՝ սա մի փոքր հիւանդագին մօտեցում է, որովհետեւ այդ դէպքում ինչո՞ւ այն ժամանակ գնացին արտերկիր, օդափոխութեան համար գնացին Սիրիա: Եթէ թուրքիայում բնակուող մի հայի հարցնենք, թէ հայերն ինչո՞ւ Սիրիա գնացին, տեսնես ի՞նչ կը պատասխանի, ինչ է կարծում: 1965 թ. իրենց փրկելու, նոյն բանը չվերապրելու համար են ասում այս ամէնը:

Եթէ հայեացք նետենք դէպի հետ, այս 1965 թ. Թուրքիայում ի՞նչ էր

տեղի ունենում, որտեղի՞ց էին ծագում փոքրամասնութիւնների տագնապները:

**Ս.Ք.** 1964 թ. գլխներին եկածից են վախենում: Հայերը տեսնում են, որ յունական համայնքը թիրախ է ընտրուած: Համայնք, որն, ըստ հուլիսի, նմանատիպ ջարդ է ապրել: 1950-60-ականների թուրքիայում բոլորը Անկարայի եւ մեդիայի նշանաբանութեան տակ էին: Ինչո՞ւ, որովհետեւ Կիպրոսի հարց կար, որի պատճառով 1955 թ. մի պատրոյգ արդէն իսկ վառուել էր եւ Ստամբուլում Սեպտեմբերի 6-7 դէպքերը տեղի ունեցան: Թէեւ այդ դէպքերի ժամանակ յոյներն էին թիրախ ընտրուած, սակայն հայերն ու հրեաներն էլ վնաս կրեցին: Հայերը մտածում էին, որ «եթէ շատ խօսենք, մեր գլխին էլ նոյնը կը գայ»: Թէեւ Անկարայի եւ յոյների միջեւ եղած լարուածութեան արդիւնքում Ստամբուլի յոյներին որեւէ բան չի լինում, սակայն քանի որ բացառապէս Կիպրոսի յոյներն են թուրք հատուածի միջեւ բախում է լինում, յարաբերութիւնները լարուած բնոյթ են ստանում, եւ տեղի է ունենում հանրապետական շրջանի առաջին յունական տեղահանութիւնը: Թուրքիայում բնակուող Յունաստանի քաղաքացի յոյները «20 դոլար, 20 կիլո» կոչուած արշաւի շրջանակում ուղարկուած են Յունաստան: 1964 թ. սկսուած գործընթացն անմիջապէս չի աւարտուում: Թերթերը վկայում են, որ 2000 յոյն է Յունաստան գնացել: Ինչո՞ւ են գնացել: Սեփական կամքով են գնացել: Որեւէ յոյն հաւանաբար դարեր շարունակ ապրած հողը չէր լքի եւ գնայ Յունաստան, որը ոչ տեսել, ոչ էլ լսել էր: Նման իրավիճակում, բնականաբար, հայերն էլ արդարացիօրէն մտածում են՝ «տեսնես հերթը մե՞զ էլ է հասնելու»: Նման ձեւով օրակարգ է բարձրանում յունական պատրիարքարանի փակման հարցը: 1453 թ. Կոստանդնուպոլսի գրաւումից յետոյ սուլթան Ֆաթիհի թոյլտուութեամբ գործող պատրիարքարանը 1965 թ. փորձում են փակել: Այսինքն՝ անգամ միջնադարում գործած կառուցը փորձում են հանրապետական թուրքիայում փակել: Բնականաբար, այս ամէնը տեսնող հայերն էլ մի փոքր վախենում են: Թէեւ այս «լաւ հայերին» հիմա մի փոքր քննադատում ենք, սակայն պէտք է քննադատել նրանց այս հոգեկան վիճակին հասցրած համակարգը:

**Ա.Ն.-** Յոյներին շարքից հանեցին: Հայերը, որ ականատես են լինում այս ամէնին, ասում են՝ «հաստատ մեր հերթն է»: Եթէ ամէն պահի ապրես վտարուելու վախով, ապա ուզած-չուզած կը մտածես, որ «հերթը քոնն է»: Հաւանաբար սա տեսնող մեր պատրիարքն էլ էր վախենում:

Եթէ սփիւռքահայերը քաջութիւն ցուցաբերեն, կարողանան զալ եւ շրջել թուրքիայում, Անատոլիայում (Արեւմտեան Հայաստան-Ակունքի խմբ.), գնան Հայաստան, այնտեղ աշխատեն, միգրացի աշտեղի հայերն էլ կարողանան դուրս գալ այս հիւանդագին հոգեվիճակից եւ ասեն այն, ինչ պէտք է ասեն: Դեռեւս պոլսահայերը քաղաքականութեամբ զբաղուող հայերին լաւ աչքով չեն նայում՝ «ասում են՝ ԺՀԿ, ԱԶԿ, ԺԴԿ է գնացել, Աստուծոյ սիրուն, թող չխառնուեն»: Անգամ մի հոգու մահը շատ կարեւոր է դարձել: Դեռեւս հայերի թերթերի ամենա-

կարեւոր բաժինները մահազդերի էջերն են: Թերթ մահազդ կարդալու համար են գնում: Այլեւս շատ կորուստ տալու համբերութիւն չի մնացել: Անգամ ամուսնութիւններն են քննարկման առարկա: Պատրիարքարանը դէմ է խառնամուսնութիւններին, անգամ յոյների հետ ամուսնութիւնը չի ընդունում:

Լաւ, տարիներ շարունակ տեւած լուրիւնից յետոյ Անկարան սեփական ժողովրդին ինչպէ՞ս է բացատրում, որտեղի՞ց ծագեց այս Դայոց ցեղասպանութիւնը:

**Ս.Ք.-** Դէպքը կապելով Կիպրոսի խնդրի հետ՝ արտաքին հրահրում է համարում: Ըստ թուրքիայի մեդիայի՝ հայերին հրահրողն ու թուրքերի եւ հայերի յարաբերութիւնները փչացնողը «սատանայ յոյներն են»:

Թուրքական մամուլի դիրքորոշումը հետեւեալն էր. «Հայերը լաւ թուրք են, մենք նրանց սիրում ենք, մեր մէջ էլ են հայեր բնակուում, նրանք Օսմանեան կայսրութեանը չափազանց հաւատարիմ էին, ըստ հուլիսի՝ նրանք վատ համայնք չեն, հաւատարիմ ազգ էին, սակայն նրանք շարունակաբար արտաքին ազդեցութեան տակ են ընկնում: Մի ժամանակ ուսանելի հետ էին, նրանց մի մասն ապստամբեց, այսօր էլ Հայոց ցեղասպանութեան մասին չեն մտածում: Հիմա էլ քանի որ Կիպրոսի յոյների եւ թուրքերի յարաբերութիւնները վատ են, սփիւռքահայերին են հրահրում»: Թուրքիայի մեդիայի մամուլի դիրքորոշումը հայերին արհամարհելը չէր, այդ ժամանակ սատանայի կերպարը յոյներն էին:

**Ա.Ն.-** Ըստ էթուութեան՝ խնդրերը Մերձաւոր Արեւելքից է ծագում: «Մեղաւորը» Լիբանանն է: Որոշ թերթեր էլ ասում են, թէ Ամերիկայի, իմպերիալիզմի թշնամանքն է: Օրինակ՝ Ազիզ Նեհինը Հայկական հարցը ներկայացնում է որպէս ամերիկեան հրահրանք: 50 տարի անց էլ գուզահեռ պետութիւններն են մեղաւոր:

Լիբանանից է սկիզբ առնում, որովհետեւ 1915 թ. պոլսահայ համայնքի մտաւորականութեան ոչնչացումից յետոյ Լիբանանը դառնում է երկրորդ վայրը, որտեղ գնում էին հայերը: Արդիւնքում Լիբանանը դառնում է մտաւորականութեան կենտրոնը: Բոլոր գրքերն այնտեղ էին տպագրւում: Այդ մտաւորական ներուժն ամիջապէս Հայաստան չգնաց, դեռեւս չի գնացել: Եթէ այսօր որեւէ բան լինի, ապա Լիբանանն է այն վայրը, որտեղ հնչակեանները, ռամկավարներն ու դաշնակցականները միասին են, միասին կարող են գործել, քաղաքականութեամբ զբաղուել, գրել, մի խօսքով՝ գաղափարական կենտրոնն է: 1915 թ. Հայոց ցեղասպանութեամբ հայ գրականութեան վարթօնքի ժամանակաշրջանն աւարտուում է, սակայն չի ոչնչանում. Լիբանանում նոր փուլ է թեւակոխում, հակառակ դէպքում արեւմտահայ գրականութիւնն էլ չէր լինի: Պոլսի հայ գրողների մի մասը կեանքի որոշ փուլ անց է կացրել Լիբանանում, այնուհետեւ կրկին Պոլսի վերադարձել: Մերձաւոր Արեւելքում Լիբանանը հայերի համար գիտական կենտրոն է եղել:

Հիմա էլ շարունակում է այդպիսին մնալ: Քեսաբից հայերն ո՞ւր փախան Լիբանան:

**Ս.Ք.-** 1965 թ. սկսում է սփիւռքն ընկալուել որպէս «վատ»

# ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏ ԲԱՍԲ ԵՐԳԻՉ ԳԵՈՐԳ ԿԱԿՈՍԵԱՆԻ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՂԻՍԱԿԱՆԸ (Խտասալիկի հրապարակման առիթով)

ՍՉԻՆ՝ ԵՐԳԻՉ ԳԵՈՐԳ



ՊՆՆ՝ ԵՐԳԻՉ ԳԵՈՐԳ

Խանդավառութիւնը, այդ օրերուն, հասած էր իր գագաթնակէտին: Տունը վերածուած էր աշխատանքային կեդրոնի մը: Իրար հրմշակող հրաւէր նամակներու եւ հեռագիրներու տարափը ստեղծած էր լաւատեսութեան պայծառ մթնոլորտ մը: Մեծն Կոմիտասի ծննդեան հարիւրամեակին նուիրուած իր երգահանդէսներուն առընթեր, համերգային մեծ շրջապատը մը Գէորգը պիտի այցելէր գլխաւոր քաղաքները Միջին Արեւելքի, գոյգ Ամերիկաներու, Գանատայի, Իտալիոյ եւ Խորհրդային երկիրներու:

Ձեռնարկեց այդ «մեծ շրջապատը» առաջին հանգրուանին, մեկնելով Եգիպտոս: 1969, Նոյեմբեր 16-ին, Գահիրէի Նայլ Հոլին մէջ տուաւ երգահանդէս մը, որ պատկուեցաւ փայլուն յաջողութեամբ, բայց ավստ՛ս որ, այդ համերգը հանդիսացաւ տարբար Գէորգի կարապի երգը: Ծակատագրի անգուժ հարուածը գգետնեց զինք 25 Նոյեմբեր, 1969-ին, անակնկալօրէն ի յայտ եկած անհանգստութեան մը հետեւանքով, խոր սուգի մատնելով լիբանանեան երաժշտասէր հասարակութիւնը եւ արուեստի օտար շրջանակները:

Արդարեւ, Գէորգ Կահուեան մինչեւ վերջին վայրկեան, հոգեվարքի պահերուն իսկ, շարունակեց երգել եւ երգելով ալ աւանդեց իր հոգին, նուիրագործելով Հայ բանաստեղծին՝ Սիւսանի Սիւսանի, հետեւեալ խօսքը.- «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ»:

Ծայր տուած հարցումներու հեղեղը հասարակութեան մէջ կը ձգտէր հասկնալ ճշմարտութիւնը: «Գէորգը ինչո՞ւ մեռաւ»: Նոյն հարցումը եկաւ նաեւ նոյնինքն, այդ օրուան Հայաստանի Մշակութային Նախարար, Գուրգէն Բորեանին: Արդարեւ, իմաստութիւն չէր կորսուել ինչուններու եւ ինչպէսներու որոնումի ճախճախուտին մէջ:

Միակ ճշմարտութիւնը այն էր, որ Գէորգը չկար այլեւս: Բայց, Գէորգը հեռացաւ այս աշխարհէն երգելով: Իր երգը ժառանգ թողեց ու գնաց: Բայց ո՞ւր էին այդ երգերը: Արդեօք կային որակաւոր ձայնագրութիւններ իր գտնուած վայրերուն մէջ:

Անորոշութեան անթափանց շղարշը, սուգի եւ վիշտի տուայտանքներուն հետ, միջազնած էր երկինքը: Ինչպէ՞ս կարելի էր յաղթահարել այդ ահաւոր կորուստին պատճառած սահմակեցուցիչ հետեւանքները: Մօրս տուած խրատը «Խորհուրդ մարդկանց, կամքն Աստուծոյ» բացաւ դուռը հաւատքին:

Մթազնած երկնակամարին վրայ սկսան շողշողալ յոյսի նշույները: Հարկ էր գործի անցնիլ անմիջապէս: Պատրաստուեցաւ յատկազին յառաջիկայ գործունէութեանց՝ Յիշատակի Ձայնապնակ եւ Յուշամատեն, առանց իսկ կարենալ պատկերացնելու, որ շուրջ հինգ տարիներ ետք, երեւելի մտաւորականներ, արուեստագետներ եւ անձնաւորութիւններ պիտի հաւաքուէին կազմելու համար «Գէորգ Կահուեանի Կրտսերի Յանձնարարութեամբ» եւ պիտի նախաձեռնէին անոր շինութեան: Ուստի, հեռագիրներ զրկուեցան ամենու-

րեք, եւ խնդրուեցաւ որեւէ տեսակի ձայնագրութիւն, ինչպէս նաեւ թերթերու անդրադարձներ եւ գրութիւններ, անմիջապէս ղրկել մեզի: Արդիւնքը չեղաւ քաջալերական: Մեզի հասած ձայնագրութիւնները կատարուած էին երաժշտասէրներու կողմէ չափազանց պարզ գործիքներով, պարզապէս անձնական ունկնդրութեան համար: Ստացուած ձայնագրիկներուն մէջ կային նաեւ Երեւանի Ռատիոյն եւ Հեռատեսիլին, ինչպէս նաեւ Ամերիկայի Ձայնէն իր ունեցած ելոյթներուն ձայնագրութիւնները: Բայց այս երգերը ձայնագրուած էին միաձայն, մոնօ, ուղղակի (live) ձայնասփռումի ժամանակ եւ նոյնիսկ տան մը մէջ հեռատեսիլի գործիքէն:

Սկսանք դասաւորել երգերը համաձայն իրենց «ձայնագրութեան որակին»: Ամիսներու աշխատանքէ ետք ունեցանք երգացանկ մը, որ կը յիշեցնէր Գէորգը:

Հասաւ ժամանակը՝ գործին վերջնական ճշդումներն ու սրբագրութիւնները կատարելու Պէյրութի նշանաւոր Սթիւտիօ Պալապէքին մէջ: Ծաբաթներու յոգնեցուցիչ աշխատանքը արդիւնաւորուեցաւ սրբագրուած եւ մաքրուած երգացանկով մը, որու մէջէն ընտրուած ինը երգերով պիտի պատրաստուէր Գէորգին Յիշատակի Ձայնապնակը:

Գործը յանձնեցինք լիբանանեան Ֆլէքս ձայնագրական ընկերութեան: Նոր բարդութիւններ խանգարեցին գործին արտադրութիւնը: Ամիսները սահեցան, մինչեւ իսկ տիւքի ընկերութեան արաբախօս գործաւորները գոց սորուեցան երգերը: Ի վերջոյ, պատրաստեցին շատ մաքուր ձայնապնակ մը, բայց ընդունելի չէր. քանի որ «գտումի եւ մաքրումի» գործը մէջտեղ բերած էր նոր ձայն մը, որ Գէորգինը չէր: Սկսաւ տեսակէտներու առճակատում: Խնդիրը կնճռուեցաւ: Տիւքի ընկերութեան կողմէ առաջարկուեցաւ գործը ստուգել Պէյրութի մէջ գործող բազմաթիւ ռատիոկայաններու սթիւտիօներուն մէջ: Սթիւտիօները մեծ մասամբ նիշ տուին 100-ի վրայ 90-էն 95: Իրենք չէին հասկնար թէ պահանջուածը պարզապէս ամենամօտիկ վերարտադրութիւնն էր Գէորգին ձայնին, քանի որ ներկայ պայմաններու տակ անկարելի էր ունենալ իր ձայնին հարազատ վերարտադ-

րութիւնը: Գէորգը դժբախտաբար չունեցաւ սթիւտիօ մասնաւոր ձայնագրութիւն իր այդքան ճոխ ու բազմազան երգացանկէն: Ան ասուպի մը նման փայլեցաւ երգարուեստի երկնակամարին վրայ, ու յանկարծ... անյայտացաւ...

Մի քանի ամիս ետք Ֆլէքս ձայնագրական ընկերութեան մասնագէտը խնդրեց Գէորգին ձայնագրելու, որպէսզի իր բամբ ձայնին յաճախութիւնը (frequency) հաշուեն Պէյրութի Ֆրանսական Համալսարանի ձայնի նոր աշխատանոցին մէջ: Օրեր ետք, խնդրեցին նոր ձայնագրութիւն Սթիւտիօ Պալապէքին մէջ՝ համաձայն իրենց գտած տուեալներուն: Բարեբախտաբար, այս վերջին ճշդումներուն արդիւնքը քաջալերական եղաւ:

Յաջորդ առաւօտուն, մասնագէտ բարեկամներով գացինք ձիւպէյլ (Լիբանան), Ֆլէքսի գործարանը: Սթիւտիօնը ելեքտրոնային էր: Աշխատանքը դադարած էր ամբողջ գործարանին մէջ: Պաշտօնեաներն ու գործաւորները հաւաքուած էին «քաթինկի» սենեակին առջեւ: Տիրապետող լուծութեան մէջ Ֆլէքսի ձայնի ինժինէրը միացուց գործիքը եւ սկսաւ «քաթինկը»: Գործը հազիւ աւարտած, երկու ձեռքերով, ամենայն զգուշութեամբ եւ գուրգուրանքով ձայնի ինժինէրը վերցուց սկաւառակը եւ լուծութեամբ առաջնորդեց մեզ քովնտի ունկնդրութեան սրահը: Բոլորին խուզարկու հայեացքները ուղղուած էին ինժին: Մտահոգուած էին... երկու տարուան տապալակալի աշխատանքներէ ետք արդեօք պիտի ունենայինք ընդունելի ար-

եւ այլ զիւտերով: Քայլ պահելու համար արդիականութեան հետ՝ որոշեցինք խտասալիկով վերարտադրել Գէորգին երգերը:

Փրկելու համար ձայնագրիկի վրայ եղող ձայնագրութիւնները, առաջին հերթին անհրաժեշտ էր թուանշել (digitize) զանոնք: Գտանք սթիւտիօ մը որ ունէր հին ձայնագրիկները նուազող գործիքներ: Բայց դժբախտաբար կորսուած էր դասական երաժշտութեան վեհ ըմբռնումը: Հետեւաբար, Սթիւտիօ Պալապէքի մէջ եղած ձայնագրութիւնը ստացաւ թուանշային (digital) տարբեր հնչեղութիւն: Նոր բարդութիւն մը, գործը ծայրէն սկսելու հարկադրանքով:

Օգնութեան հասան երաժշտագէտ բարեկամներս: Կատարեցինք վերջնական գտումը գոյութիւն ունեցող ձայնագրուած երգերուն: Կրցանք փրկել նաեւ հինգ երգեր եւ աւելցնել իր ձայնագրական ինքն երգերուն վրայ՝ ամբողջացնելով երգացանկը խտասալիկին: Եղան ժամանակներ երբ գործը արդիւնք չի տուաւ ... յուսահատեցանք՝ բայց տեղի չի տուինք: Ամիսներու վրայ երկարող ընդմիջուած եւ տքնաջան աշխատանքներէ ետք հասանք որոշ արդիւնքի՝ ճշդուած երկու տարբերակներով: Բայց սպասուածը չէր...: Կարծես անցեալի պատմութեան կրկնութիւնն էր... Ձանացին համոզել թէ թուանշային ձայնագրութիւնը տարբեր կ'ըլլայ եւ պէտք է վարժուիլ անոր: Վարկածը համոզիչ չէր:

Մինչ այդ ժամանակ շահելու համար որոշեցինք պատրաստել խտասալիկին մէջ ներփակուելիք նիւթերը: Նախ պատրաստուեցաւ



ԻՎՅՆ՝ ԵՐԳԻՉ ԳԵՈՐԳ

ըրկնք մը: Պատասխանը չուշացաւ: Հազիւ թէ սկաւառակը սկսաւ երգել՝ ըսի.- «Հիմա վերածնաւ եղբայրս Գէորգը...»: Մտահոգիչ լուծութիւնը յանկարծ փոխուեցաւ ցնծութեան աղաղակներու... ուրախութեան արցունքները կը վազէին բոլորին աչքերէն... եւ առանց բացառութեան կը փաթթուէին ինժին, կը համբուրէին երեսներս ու կը շնորհաւորէին զիս... Ձայնի ինժինէրը արտասուալից աչքերով մօտեցաւ ինձի, սեղմեց զիս իր կրծքին, եւ խնդրեց ներողութիւն... «Յակոբ, կը ներես որ նախապէս չկրցանք հասկնալ քեզ... Իրաւունք ունէիր... Այս նոր արդիւնքը հոյակապ է»:

Անցան տարիներ եւ տասնամեակներ: Գիտութիւնը զարգացաւ եւ նորութիւններ սկսան գրաւել հրապարակը: Ձայնագրականները փոխարինուեցան խտասալիկներով

խտասալիկին պիտակը: Տուփին ետեւի «Թրէյ Քարտը» երկու երեսներով՝ արտաքինը երգերու ցանկով եւ նկարներով, իսկ ներքինը՝ Գէորգին, սկիզբէն մինչեւ վերջ, արուեստի կեանքը ներկայացնող նկարներու դասաւորումով: Մինչ այդ, որքան ուշացաւ երգերուն սրբագրութիւնը, այնքան աճեցաւ եւ ուռճացաւ բովանդակութիւնը նիւթերուն: Այնպէս որ չորս էջնոց ճակատի պարզ քարտը վերածուեցաւ 28 էջնոց գրքոյկի: Անգլերէն եւ հայերէն լեզուներով՝ կենսագրութիւն, վկայութիւններ, ծանօթութիւններ, երգերը իրենց հարազատ բնագիրներով եւ անգլերէն բացատրութիւններով, ինչպէս նաեւ, թէ բանաստեղծներուն եւ թէ ալ երգահաններուն ծննդեան եւ մահուն թուականներու նշումով, եւ Գէորգ Կահուեանի պատկերներով



## Armenia Raises Concerns Over 'Subversive Activities' Of Azerbaijan



Foreign Minister Edward Nalbandian meeting with OSCE Minsk Group Co-Chairs

BRUSSELS -- Armenian Foreign Minister Edward Nalbandian drew the attention of international mediators to the 'intensified subversive activities' of Azerbaijan as he met with them to discuss further steps on settling the protracted Nagorno-Karabakh conflict on Tuesday.

According to the Armenian Ministry of Foreign Affairs, in Brussels Nalbandian held a meeting with the OSCE Minsk Group Co-Chairs Igor Popov (Russia), James Warlick (USA) and Pierre Andrieu (France), as well as Personal Representative of the OSCE Chairman-in-Office Andrzej Kasprzyk.

The sides reportedly proceeded with the discussions of ways "to advance the process of peaceful settlement of the Nagorno-Karabakh conflict."

"The top Armenian diplomat drew the attention of the mediators to the militarist rhetoric of Azerbaijan, the statements distorting the essence and contents of the negotiations, the gross violations by Azerbaijan of the ceasefire regime at the border with Armenia and along the Line of Contact with Nagorno-Karabakh's Armed Forces

that have caused loss of life, as well as more intensified subversive activities," the statement said.

Nagorno-Karabakh's authorities said last week that a group of Azerbaijanis had been arrested in the region on suspicion of espionage and subversive activities. The NKR police force said the group members had killed one military serviceman and severely wounded a civilian in their sabotage activities. Another Karabakh teenager, it said, had been kidnapped and then brutally murdered by the alleged Azeri saboteurs.

Nalbandian stressed that by its provocative actions Azerbaijan exacerbates the situation, "openly ignoring the numerous calls of the leaders of the Co-Chair countries to prepare the peoples for peace."

"Despite the calls of the international community that already become targeted the government of Azerbaijan continues its destructive and dangerous policy, persecuting and imprisoning, on fabricated charges, those Azerbaijanis who speak in favor of

Continued on page 4

## Armavir Mayor Injured by Mine Explosion in Nagorno-Karabakh

YEREVAN — One person was killed and at least three injured when their car hit a mine in the Kashatagh Province of Nagorno-Karabakh Republic (NKR) on July 22.

The Armenian Ministry of Emergency Situations confirmed that a Toyota Prado was blown up near the village of Vaghazin in the Kashatagh district early on Tuesday. NKR authorities say those injured include Ruben Khlgatian, the mayor of the western Armenian city of Armavir. The car's driver was killed in the explosion.

The injured were transported to a medical center in the Armenian capital, Yerevan.

The health conditions of Mayor Ruben Khlgatian and other two injured is assessed as serious, but stable. The



Armavir Mayor Ruben Khlgatian

Press Service of Yerevan's Erebuni medical centre confirmed that all the three patients have been taken to the intensive care unit. According to the official, the injuries sustained by the survivors are not life-threatening.

## OSCE Concerned About Armenian Court Decision Forcing Media to Disclose Sources

Organization for Security and Cooperation in Europe (OSCE) Representative on Freedom of the Media Dunja Mijatovic has expressed concern about a court ruling in Armenia that forces media outlets to disclose their sources of information.

On June 26, the Administrative Court of the Kentron and Nork-Marash districts in Yerevan ruled that two media outlets, the Hraparak newspaper and Ilur.am news portal, should disclose their sources as part of the criminal investigation involving a high-level police official of the Shirak region.

"I am concerned that this ruling might have a chilling effect on media as it could thwart reporting on issues of public interest," Mijatovic said on Tuesday, according to an OSCE press release. "The need for journalists' professional confidentiality with public and private sources of information must be acknowledged."

She noted that the right of journalists to protect the identity of sources is a key principle of investigative journalism and has repeatedly been declared as a basic requirement for freedom of expression by the OSCE.

Earlier this month Hraparak and Ilur.am refused to comply with the court ruling ordering them to disclose

the sources of their recent reports accusing Vartan Nadarian, the chief of police of Armenia's northwestern Shirak province, of attacking two young men in a dispute outside the regional capital Gyumri. One of them turned out to be Artur Aleksanian, a prominent Armenian wrestler and three-time European champion.

Citing those reports, the Special Investigative Service (SIS) launched a criminal investigation into the alleged violence. The law-enforcement agency subordinate to state prosecutors told the two media outlets to disclose the sources of the information, saying that it was necessary for solving the case. Both publications refused to do that, leading the SIS to take them to court.

Both media outlets said they will appeal against the ruling and will not name their sources in any case. They accused the authorities of using the case to bully news organizations critical of the Armenian government.

Under Armenian law, courts can order media to disclose their sources if they deem that necessary for solving grave crimes. Editors and journalists defying such orders risk up to two months in prison. This legal provision has never been enforced before.

## Priests Attacked at Armenian Church in Tbilisi



Surb Etchmiadzin Armenian Apostolic Church in Tbilisi

TBILISI — About 50 people physically attacked priests at an Armenian Church in Tbilisi on Saturday.

The Armenian Apostolic Church says the pre-planned attack was motivated by religious and ethnic prejudice, but Georgia's Ministry of Internal Affairs treats the incident as normal crime not related to discrimination.

According to the Diocese of the Georgian Diocese of the Armenian Apostolic Church (AAC), July 19, there was an organized attack on Surb Etchmiadzin Church in Tbilisi, describing the altercation and subsequent violence against Armenian clerics, Diocese employees and a group of Arme-

nians in the yard of the Church in the Georgian capital as a 'pre-planned attack' committed on the grounds of 'ethnic and religious hatred'.

The Church's statements says a provocation took place at about 16:00. A woman was trying to drive her car out of the area adjacent to the church, but was unsuccessful and started to express dissatisfaction towards the cleric at the Armenian Church as if his car was blocking the way for her own to car in the parking area.

At that moment, two 'aggressively disposed' men approached and helped to get the car out. The cleric

Continued on page 4

## Charles Aznavour Calls on Russian Authorities to Commute Levon Hayrapetyan's Restraining Order

Charles Aznavour has expressed concern over the arrest of Armenian businessman and philanthropist Levon Hayrapetyan in Moscow. Aznavour called upon the Russian authorities to commute Hayrapetyan's restraining order of arrest, and in consideration of his health condition.

Charles Aznavour, who has met with Levon Hayrapetyan on numerous occasions, has consistently praised his activities aimed at the

development of the Nagorno-Karabakh Republic (Artsakh) and Armenia, the Artsakh Today press center informed.

Levon Hayrapetyan, 65, was detained in a Moscow airport on July 15. The Russian Federation Investigation Committee has brought two criminal charges against him; the charges are prodigality and legalization of illicit income. Hayrapetyan, however, pleads innocent.

## Zaven Khanjian Appointed New Executive Director/CEO of AMAA

Պէտք է խոստովանիլ, որ Հեռավոր Արեւելքի մէջ միշտ ալ բարեհաճ եղած են հայերու նկատմամբ եւ այդ հարցին մէջ մեծ ու անժխտելի է Տիվնա Արգարին աւանդը: Մէկըի ձգելով իր գործը՝ Տիվնան անձամբ զացած է ճափոնի իշխանութիւններու եւ օտարներ կրեց ղեկավարներու մօտ՝ որպէսզի կարգաւորէ փախստական հայերուն փաստաթղթային խնդիրներն ու դիւրացնէ անոնց ճամբորդութիւնը: Ան իր ծանրակշիռ ու յայտնի առեւտրական գործակալութիւնը օգտագործած է որպէս հայ գաղթականներուն օժանդակելու դիւանագիտական առաքելութեան գրասենեակ, իսկ իր տունը անոնց համար ծառայած է որպէս ժամանակաւոր ապաստարան: Ճափոն, Տիվնային այցի զացած է Ս. Էջմիածնայ պատուիրակ Ռուբէն Մ. Վրդ. Մանասեանը: Ահա

ԹՅ Ռ. Ա. ՀԸ 18

### ԹՈՂ ՈՐ ԱՌԱԻԵԼ ԱՐԳԱՍԱԴՐՈՒԻ

Զօն՝ Լուսինէ Քէիշեանին  
Դոկտորութեան տիտղոսին արժանանալու առիթով  
Ռ. ԿՈՐԻԻՆ

Կեանքը անհիմնալի պարգեւ է հրաշալի  
Գերբնականից ընծայուած մարդարարածին  
Նա իմաստ, արժէք է ստանում, գեղեցկանում,  
Երբ բխում է՝ անբիծ սէր, աշխատանք եւ նուիրում:

Ով ունկնդիր է իմաստուն խրատների,  
Իր կեանքն է կառուցում արժանավայել,  
Լուսինէն մէկն էր ժրջան ու խելացի,  
Որ իր սիրած ճամբէն ընտրեց հաւատով:

Ընդունակ աշակերտը յուսախափ չի լինի  
Անվարան կը հասնի իր երազանքներին:

Յոյսը մարդուն չի ամանչեցնի,  
Երբ միտքը դէպի վեհին լինի,  
Հաւատք, սէր եւ քերթ ոգի լինի,  
Աշխատանք եւ գիտութիւն լինի:

Գործիք խոփը կը փայլփլի,  
Երբ արտը հերկի ու վար անի,  
Գիւղացին իր բերքը կը ստանայ,  
Երբ յուսով ու եռանդով ցանի:

Անծրել կը տեղայ առատ ու լի,  
Բիւր հատիկներ ծիւրեր կը տան,  
Հասկերով արտը կը կանաչի,  
Արեւ-զնդի քերթ շողերի տակ:

Արտը ամբողջ ոսկի կը դառնայ,  
Բերքը առատ հունձքի կը նստի,  
Գործն արդար արդիւնք կ'ունենայ,  
Գործն արդար արդիւնք կ'ունենայ,



Յանողի սիրտը կ' ուրախացնի:

Լուսինէն հէնց էն սկզբից,  
Մանկապարտէզ դպրոցից,  
Գիտակցեց կարիքը ուսման,  
Սիրով նրան կառչած մնաց:

Ինճը տարիներ գերազանց,  
Իրանի «Յունեան» դպրոցից  
Տարրականից մինչեւ ուղեցոյց  
Մեծ յաջողութեամբ աւարտեց:

Ապա Ամերիկայի նոր կեանք,  
Անծանօթ լեզուին ու վիճակին,  
Ժրջան աշխատանք էր կարիք  
Յարմարուելու միջավայրին:

Կեանքը հեշտ չի իր օրէնքն ունի,  
Ինչպէս բնութիւնը չորս եղանակ,  
Աշխատանք ու խելք միասնական

Կեանքի օրէնքն է դա անպայման:

Այդ ուղին դարձաւ նրան օրինակ,  
Սիրով կապուեց ու առաջ գնաց,  
Յոյսն իր ճիգ ու ջանքին շարունակ  
Ոչ մի խոչընդոտի դէմ կանգ չառաւ:

»Հայսքուլի« աշակերտ դարձաւ,  
Զանափրութեամբ աւարտեց,  
Գնահատանքի արժանացաւ,  
Բարձր միջերով Քոլէճ ընդունուեց:

Նոյն ոգով քոլէճն շարունակեց,  
Ապա UCLA-ից հրաւեր ստացաւ,  
Փայլուն միջերը հիմք ծառայեցին  
Եւ Համալսարանական դարձաւ:  
\*\*\* \*\*

Դեղագործութեան ճիւղն ընտրեց,  
Դասախօսների աչքի լոյսը դարձաւ,  
Գիտական ժողովների ուղարկուեց,  
Զեկոյցներով վարկը բարձրացաւ:

Լուսինէն պարտաճանաչ ու գիտակից,  
Գիտեր թանկ ժամանակը արժեւորել,  
Միշտ ընթերցում էր դասերին յարակից,  
Մտքում փայփայում էր գերազանց լինել:  
\*\*\* \*\*

Եւ ահա եկաւ պսակաւոր գիտութեան արժանանալու օր,  
Փասադինայի աղէթորիոն համալիրն էր հանդէսի կենտրոն,  
Օրը չորեքշաբթի Մայիս 14, 2014 թիւ,  
Հսկայ թատերասրահը լեցուն էր բազմազգ հրաւիրելուներով:  
\*\*\* \*\*

Հարիւրաւոր ծնողներ տարբեր ազգերի  
Արդարեւ, ազգերի հաւաքածոյի

մի եկած,  
Ներկայ էին գտնուել իրենց գաւակների  
Կեանքի բացառիկ հանդէսին նւիրում:  
\*\*\*

Նրանց միջոցով, համալսարանի կարգադրութեամբ՝  
Բեմի վրայ դեկավար գիտական կազմի դէմ դիմաց,  
Գիտութեան թիկնոցը հազգնել գաւակին անձամբ,  
Մեծ պատիւ եւ մեծարանք էր ծնողին յատկացուած:

Մատների վրայ համրուող հայ թեկնածուների քանակ,  
Իսկ այլ ազգիներ՝ ժապոնացի, կորիացի, չինացի բազում...  
Աստղերի պէս փայլում են գիտութեան մէջ այս տեսակ,  
Իսկ մերոնք՝ հազիւ մասնակից գիտութեան այս ճիւղուն:

Ինճը տարիների անխոնջ սովորելուն որպէս միջոց  
Աւարտահանդէսի հոյակապ արարողակարգում,  
Շուրջ երկու հարիւր դեղագործ եւ ատամնաբուժների մէջ  
Լուսինէն շուրջ-պսակով դոկտորութեան է արժանանում:  
\*\*\*

Կեանքն այստեղ կանգ չի առնում,  
Հողագնդի պէս շարժումն մէջ է յար,  
Նոր թռիչքներով դէպի առաջ է գնում,  
Եթէ ոչ կանգնած քրի պէս կը լճանայ:

Արծուի գոյը խոյանքների շնորհիւ է,  
Մարդուն գոյն էլ մտքի թռիչքներով է,  
Օղանալի պէս դէպի վեր սաւառնել  
Ապա ուղղութիւն դէպի թիրախ շարժուել:



# ՈՂՋՈՅՆ ԱՍՔԱՆԱԶԵԱՆ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՐԱ ԱՐՔԱՅ ՊԱՐՈՅՐ ՍԿԱՅՈՐԴԻՈՅՆ

«Բայց չի փախիս, փարե՛ երկրիդ, գայն սիրե՛, Յոզիդ վրայ գերի մ'ըլլար, այլ տիրե՛...»

Ռուբեն Սեւակ

«ԱՆՑԵԱԼԻՆ ԵՂԱԾ Է ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԻՐ ՄԸ, ՈՐ ՅՈՒՍԻ ԿԱՅՈՐՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ՅԱԿԱՌԱԿՈՐԴՆ ԵՐ ԵՒ ԿԸ ԿՈՉՈՒԷՐ ARMENIA»

Պեմիթո Մուսուլիմի

«Յրաման տուր, ասում է նա, Արարատ թագաւորութեանը եւ Ասքանագեան գնդին...»

Երեմիա Մարգարտ

äü0aë²ð0°Ü²Î È²¶Æë°²Ü

Երեմիա Մարգարտ, մ.թ.ա. VII դարի 10-ական թուականներ, «Արարատ» ու «Ասքանագ» թագաւորութիւններին պատերազմի է կոչել Բաբելոնի դէմ: Աստուածաշունչի Հայ հին մեկնիչների կողմից Ասքանագը ճանաչուել էր իբրեւ հայոց նահապետ: Աւանդաբար փոխանցուած պատումի համաձայն, Նոյի որդի Յաբէթի թոռներն էին Թորգոմը եւ Ասքանագը: Մ.թ.ա. VIII դարում, Արմինա երկրի հիւսիս-արեւելեան կողմը բնակուել է մի ցեղախումբ, որը կոչուել է Ասքանագ: Այն, վրացի ու Արմինա-Հայ ժողովուրդների խառնուրդ է համարուել, որի համար էլ նրանք իրենց համարել են Ասքանագէն սերած: Արմինա-Հայերը վրացիներին ցեղակից չեն, նրանք Կովկասեան ժողովուրդ են համարուում: Արմին արիական ցեղի ծագման թիւը մ.թ.ա. հազար-հազար տարիներին է, արարչական ժամանակներին է այն իր բնօրրան «Հայկական Բարձրաւանդակում», նոյն ընդհանուր լեզուով ու ծագման նոյն տարածքով հնդեւրոպական ընդհանուր ցեղախումբի մի ճիւղն է: Անօրէն օտար ու Հայ պատմագիրներ, որտեղ սաես որ չտարան Արմինա-Հայ ցեղին, պատմութիւնը աղաւաղելու իրենց ամօթն է այն: Հայ հին մեկնիչներ Յաբէթի որդի Գամբերի ու նրա որդիանց որդի՝ Ասքանագին ճանաչել են իբրեւ հայոց նահապետ: Ըստ Աստուածաշունչ մատենանի, Գամբերը ծնել է՝ Թիրասին, նա էլ Թորգոմին, նալ էլ Հայկին ու նրա որդի Արամանակի շարքին, ովքեր էին Հրեայ ցեղի Նոյի Նահապետը եւ իր որդիները...:

Ասքանագ, Եբրայէրէն Աշքենագ, սկիւթական ծագմամբ հնագոյն ցեղային միութիւն էր: Մ.թ.ա. VIII դարում, ներկայ Դաղստանի ծովափնեայ տեղանքով իջել դէպի հարաւ, հաստատուել Կուր գետի հարթավայրի Շակաշէն կոչուած գաւառի շրջանում: Ըստ Երեմիա Մարգարէի, Աստուածաշունչ մատենանում այն յիշատակուում է Արմինա-Ուրարտու երկրի հարեւանութեամբ՝ որպէս զօրեղ թագաւորութիւն: Ասորեստանի դէմ մղուած պայքարում յաճախ գործակցել Արմինա-Ուրարտուի եւ Մարաստանի հետ, մասնակցել մ.թ.ա. 612 թուականին Նինուէի գրաւմանը:

Երեմեա Մարգարէ, նրա արած գուշակութիւնները իր ժամանակին կատարուած իրադարձութիւններ էին եղել, այն վերագրել նրան որպէս գալիք ժամանակներին կատարուելիք պատահարների գուշակութիւններ: Երեմեան թող գուշակէր, որ իրենից աւելի քան հարիւր տարիներ յետոյ, մ.թ.ա. 539 թուականին, Արմինա երկրի Երուսաղեմի թագաւորական նոր գահատոհմի Երուսաղեմի Ա. Սակաւակեաց թագաւորի որդի՝ Տիրգրան թագաւորը, դաշնակցային պարտաւորու-

թեամբ, իր զօրավարութեամբ երկրի այլուձիւր ու հետեւակ գուշակները առաջնորդած, մտերիմ բարեկամ՝ Աքեմենեանների Կիւրոս թագաւորի բանակի հետ, սրնթաց արշաւել Բաբելոն, քաղաքի պարիսպների տակ մղուած ճակատամարտում ջախջախել նրանց պաշտպանական զօրամասերը, ներխուժել Բաբելոն, պարտութեան մատնել նաեւ քաղաքի պաշտպանական զօրական գուշակներին, տիրել Բաբելոնին եւ որպէս անօրէն չարագործների քաղաք... աւերել էին այն:

Աքեմենեանների Կիւրոս թագաւորը հրամայել է կաւէ գլանի վրայ սեպագիր գրեթով արձանագրել իր արարումները, որը պեղուել է մ.թ. 1879 թուականին: Այնտեղ են արձանագրուած Բաբելոնի նուաճման մանրամասները, կայսրութիւնում նոր կարգեր հաստատելը, պաշտամունքի ազատութիւն թոյլատրելը: Բաբելոնում գերուած ժողովուրդներին իրաւունք է շնորհել վերադառնալ իրենց հայրենիքներ, որը աշխարհում մարդկային իրաւունքների պաշտպանութեան առաջին հռչակագիրն է: Հին Կտակարանում, Հրեայ գրագիր քուրմերը փառաբանել են Կիւրոս թագաւորին, որպէս Հրեաներին ամբողջական ոչնչացումից փրկողի: Երեմեա Մարգարէն աղաչել էր Արմինա երկրի «Արարատ» թագաւորութեանը օգնելու Բաբելոնը կործանելու, սակայն չէին յիշատակել երկրի Տիրգրան թագաւորի անունը եւ Կիւրոսի հետ նրա զօրական դաշնակցութիւնը: Հարիւր տարիներ յետոյ, Յոյն զօրավար-պատմագիր Քսենոֆոնը գրել է Արմինայի թագաւորի ու Պարսկաստանի Կիւրոս թագաւորի դաշնակցային յարաբերութիւններին եւ նրանց զօրական գործակցութեան մանրամասնութիւնների մասին:

Պարոյր Սկայորդի, մ.թ.ա. 673 թուականին Ասքանագեան թագաւորութեան հիմնադիր արքան է, սակերի հետ դաշնակցութեամբ Հայկական Լեռնաշխարհում հզօրացած պետական-քաղաքական կազմաւորում էր: Սակերը վաշկատուն ու ռազմասէր ժողովուրդ էին, բնակուել Հիւսիս Եբրատեւոյեան շրջաններում՝ ցեղակից Կիմերների հարեւանութեամբ, որոնք Մ.թ.ա. VIII դարի վերջերին նրանց մղել են դէպի Փոքր Ասիա ու Անդրկովկաս: Սակերն էլ, մ.թ.ա. VII դարի սկզբներին հոծ գանգուածներով անցել Կասպից ծովի արեւմտեան ափերով, աստիճանաբար հաստատուել Հայկական Լեռնաշխարհի հիւսիս-արեւելեան ու հարաւային լաւագոյն հողերի շրջաններում, որը կոչուել է Սակաշէն, իսկ հայկական աղբիւրներում Շակաշէն: Մ.թ.ա. VII դարի սկզբներին իրենց տիրապետութիւնը տարածել են Արմինա-Ուրարտու թագաւորութեան հարեւանութեամբ՝ Կուր գետի արեւելեան աւազանից մինչեւ Կասպուսի լճի տարածքներ: Մ.թ.ա. 673

թուականին հիմնադրել թագաւորութիւն, Ասորեստանի սեպագիր արձանագրութիւններում յիշատակուել՝ որպէս Աշգուզա, Եբրայէրէն Աշգենագ, իսկ հայկական աղբիւրներում՝ Ասքանագ:

Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն» մատենանը Արմինահայերի լեռնաշխարհի Արարատի սպիտակ գագաթին ճառագած առաւօտեան լույսի առաջին շողն է: Հրեայ ազգի պատումի մատենանի փոխարէն Արմինա-Հայ ազգը իր պատումի մատենանը թող պատարագէր: Հրեայ ազգի պատումի Հին Կտակարանի Յունարէնից թարգմանութիւնը Պարթեւ Սուրեն-Գրիգորի թոռ՝ Սահակ կաթողիկոսը անուանել է «Աստուածաշունչ»: Արմինա-Հայերը, հակառակ ամբողջ Քրիստոնէայ աշխարհի կողմից Հին ու Նոր Կտակարանները «Bible» անուանելուն, «Աստուծոյ շունչով» գրուած «Աստուածաշունչ» կոչել այն: Ինչ էր թարգմանիչներին համար նշանակել այդ վերացական արտայայտութիւնը: Քաղաքակրթութեան օրրան Արմինա-Հայաստանի օտար տիրակալներ, բնիկների օրրանի հաւատքի ճշմարտութեանը դաւելով, ուրիշի հաւատքն են դաւանել, չարամտօրէն սպանել նրանց նախնիների դիցաբանութիւնը: Պատմահայրը հաւաստել է, որ իր ցեղի մարդիկ աւելի վաղ էին դիցաբանութիւն ունեցել քան Պարթեւ, Պարսքի եւ Եբրայէցիների երկրների մարդիկ: Մի Հայ իմաստուն մտածող՝ Սասունցի Դաւիթ՝ էպոսի մեկնաբանութիւնում հաւաստել, որ արմին նախնիները իրենց էպոսը «Աստուածաշունչ» էին կոչել, որի յիշողութեամբ էր, որ Հին ու Նոր Կտակարանների թարգմանիչներ՝ Մեսրոպի աշակերտներն ու Սահակը Պարթեւ կաթողիկոսը այն անուանել էին՝ «Աստուածաշունչ»:

Մովսէս Խորենացին իր մատենանում խօսում է՝ «Չուարձանում եմ ոչ փոքր ուրախութիւն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնի սերունդները թագաւորութեան աստիճանի են հասնում»: Նրա «Հայոց Պատմութիւնը» ժամանակագրական, պատմական կուռ կառուցուածքով յօրինուած երկ է, այն հանդիսանում է նաեւ հարեւան երկրների պատմութիւնների որպէս սկզբնաղբիւր: Շատ սակաւ պատմական աղբիւրներ են հասանելի եղել իրեն, մեղադրել նախնիներին պատմական յիշատակարաններ չգրելու եւ ոչ էլ դրսի որեւէ տեղից «իմաստութեան նպաստներ» ներս բերելու համար: Այդ պատճառով, նա իր ցեղի ծագումնաբանութիւնը սկսել Նոյի ժամանակից, Հայոց Հայկ Նահապետին համարել Նոյի Յաբէթ որդու թոռ՝ Թորգոմի որդին: Արդար չէր Խորենացին: Հայրենի երկրի ու դրացի երկրների փլած պալատների ու ամրոցների պատերին, ճանապարհների կոթողներին ու քարերին սեպագիր բազում արձանագրութիւններ էին քանդակուել, որոնք իրենց համար ընթեռնելի չէին: Ըստ երեւոյթին, նա նաեւ ծանօթ էր եղել ցեղակից Յոյների բոլոր մատենաներին: Ինչու համար նա ուրիշ ցեղի պետութեան Սկայորդի իշխանի որդի Պարոյր թագաւորին պիտի փառաբանէր եւ որ բնիկ նախնի սերունդներից իշխաններ թագաւորութեան աստիճանի էին հասնում: Բազում դարեր յետոյ պիտի կարգային, դեռ պիտի կարգան, որ Հայկական Լեռնաշխարհում հազար-հազար դարեր առաջ Արմին-

նա-Հայաստանում թագաւորել էին իշխանական տարբեր գահատոհմեր, Սակերի ցեղից Ասքենագի տոհմի Սկայորդի իշխանի որդի՝ Պարոյրի թագաւորութեան հիմնադրման ժամանակ Արմինայում թագաւորել էր Արամ-Արամէ թագաւորի հիմնադրած Նայիրեան ցեղերի համադաշնութեան Արա Արայեան գահատոհմից «Երեմէնա» Արմին ծագումով արքան, որը «Արմին» անուան աղաւաղուած ձեւն է: Նրանից առաջ ու յետոյ, երեք հարիւր տարիներ այնտեղ թագաւորել են նոյն թագաւորական տոհմի նախնի հզօր աշխարհակալ արքաներ: Պատմական որոշ աղբիւրների բացակայութիւնը եւ սեպագիր արձանագրութիւնների անմատչելիութիւնը կարող էր տանել նման շփոթութեան: Մովսէս Խորենացու Պարոյրը՝ Արմինա-Ուրարտուի Արա Արայեան տոհմի Արմին արքայ է:

Ասքանագ անունով երկիրը հզօրացել է Հայկական Լեռնաշխարհի բնիկ բնակչութեան հետ տնտեսական ու մշակոյթային սերտ յարաբերութիւններ հաստատելով ու Արմինա-Ուրարտուի հետ ռազմաքաղաքական դաշնակցութեամբ: Մ.թ.ա. 673 թուականին Ասորեստանը նաեւ Ասքանագ երկրի հետ հաստատել է դաշնակցային յարաբերութիւններ, այն ամրապնդուել Ասորեստանի թագաւորի դուստրի հետ Պարոյր Սկայորդի արքայի ամուսնութեամբ:

Մարաստանի Վարթակէս թագաւորը, Պարոյր Սկայորդի հետ սիրալիր յարաբերութիւններ հաստատելով իր կողմն է գրաւել նրան, խոստանալով թագաւորութեան պատիւ: Ասորեստանեան, հին Յունական ու Հայկական աղբիւրները Պարոյր Սկայորդի թագաւորին համարել են մ.թ.ա. 668-633 թուականներին Աշշուրեանապալ, Մարտանապալ թագաւորների ժամանակակիցը:

Մովսէս Խորենացին նորէն հաւաստում է, որ հայոց նախնիները «անիմաստասէր» էին, դրացի պետութիւնների թագաւորների գործերը գրի են առնուել իրենց յիշատակագիրների կողմից, իսկ իրենցը ոչ: Մովսէս Խորենացին հաւաստում է, որ իր յիշատակած հայ թագաւորների անունները եւ նրանց արարումները վերցրել էր Ասորեստանցիների ու Պարսից հին գիււաններին, որովհետեւ նրանց գործակալները եւ վերակացուները նրանց անունները ու կատարած գործերը գրել էին իրենց արքունիքների գրքերում: Սակայն նրա յիշատակած Արմինա-Հայերի թագաւորների ոչ բոլոր անուններն են յիշատակուել Քաղտէացիների, Ասորեստանի, Մարաստանի ու Պարսկաստանի, Արմինա-Ուրարտու արքաների սեպագիր արձանագրութիւններում:

Մովսէս Խորենացին թուարկում է՝ «մեր թագաւորներին», մինչեւ երկրում Պարթեւների թագաւորութեան հաստատուելը, որովհետեւ՝ «մեր թագաւորների մէջ ինձ ու այս մարդիկ են սիրելի, իբրեւ բնիկներ, արիւնակիցներ, իսկական հարազատներ», նրանց անուանել «Հայկագուն»: Խորենացին փափաքել էր, որ նրանց ժամանակ աշխարհ եկած լինէր, որ նրանց «տէրութեամբ գուարձանար»: Ափսոսում է, «որ վաղ ժամանակներից այդ դրութիւնը փախաւ»: Ինձ, Մուսայ Լեռցի տարեցայրի համար, Հայ պատմագիրներ-

### ԱՐԴԻԻՆԱԿԻՏ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Ընկերային հոգատարութիւնը եւ անհատի մը անմիջական միջա- վայրին մաս կազմող անձերը ճակա- տագրական դեր ունին անոր կեանքին մէջ, որովհետեւ անոնք կրնան բարելաւել անոր մտային եւ հոգեկան, ինչպէս նաեւ ֆիզիքական առողջութիւնը:

Ուսումնասիրութիւններ ցոյց տուած են թէ ճնշուածութենէ տա- ուապող մարդոց պարագային ընկե- րային եւ զգացական հոգատարու- թիւնները կրնան երկարել անոնց կեանքը: Աւելին՝ նման հոգատարու- թիւններու բացակայութիւնը կրնայ անհատը առաջնորդել ճնշուածու- թեան (stress) եւ յուզողի պարագային՝ ընկճուածութեան (depression):

Առօրեայ կեանքի ընթացքին բնականաբար կը ստեղծուին բազմաթիւ առիթներ՝ օգտակար դառնալու մեր ընկերներուն, բարեկամներուն կամ ընտանիքի անդամներուն եւ օժանդակութիւնը կամ հոգատարութիւնը կը դառնան մեր առօրեային անբաժանելի մաս մը: Սակայն, շատ մը պարագաներուն մարդիկ սխալ ձեւով կ'օգնեն ուրիշներուն, նոյնիսկ երբ անոնց յետին նպատակը ըլլայ դրական: Կարգ մը պարագաներու այնքան սխալ կ'ընթանայ հոգատարութիւնը, որ օգնութիւն ստացող անհատը վատ կը զգայ անոր նկատմամբ: Հետեւաբար, իսկապէս դժուար է իմանալ թէ ինչպէս պէտք է արդիւնաւէտ ձեւով օգտակար հանդիսանալ ընկերներուն կամ ընտանիքին:

Ընկերային հոգեբանական ուսումնասիրութիւններու շնորհիւ մասնագէտներ յաջողած են յայտնաբերել քանի մը սկզբունքներ, որոնք կրնան օգտակար դառնալ արդիւնաւէտ ձեւով մարդոց հոգալու եւ օժանդակելու անոնց:

Անհրաժեշտ է իմանալ, որ հոգատարութեան կամ օժանդակութեան արարքները պէտք է կատարուին անողորակի ձեւով:

Հակառակ, որ ընդհանրապէս երեւելի իրերը կամ արարքները աւելի դիւրութեամբ կը գրաւեն մարդոց ուշադրութիւնը, օգնութեան պարագային նոյնքան զգալի եւ գրաւիչ կ'ըլլան արարքները երբ կատարուին անողորակի ձեւով: Ըստ հետազոտութիւններուն, ուղղակի օժանդակութիւնը օգնութիւն ստացող անհատներուն մօտ կը նուազեցնէ անկախութեան եւ արդիւնաւէտութեան զգացումները, ինչպէս նաեւ անոնք կրնան պարտաւոր զգալ փոխադարձելու օգնութիւնը: Այս զգացումները կրնան պատճառ դառնալ որ անհատին մօտ բարդանան արդէն իսկ գոյութիւն ունեցող զգացական հարցերը: Այս բոլորը կրնան նուազեցնել անձին ինքնավստահութիւնը, որուն հետեւանքով ան դժուարութեամբ կը դիմագրաւէ իր հարցերը: Այսպէս, ուղղակի օժանդակութիւնը կրնայ հիմնական հարցին վրայ աւելցնել նոր հարցեր:

Անողորակի օգնութիւնը տեղի կ'ունենայ երբ թէ՛ օգնողը եւ թէ՛ օգնուածը ստացող անձը արժեւորուած զգան օգնութիւնը կատարուելէ ետք: Նաեւ, անողորակի օգնութիւնը պէտք է խախտէ անձի մը հեղինակութիւնը: Օգտակար դարձող անձը պէտք է վստահ ըլլայ որ իր եւ իր ընկերոջ կամ հարագատին միջեւ օգնողի եւ օգնուածի ստացողի տարբերութիւնները հասնին նուազագոյնին: Երբ հոգատարութեան արարքները շեշտուին, օնութիւն

ստացող անձը կրնայ ներդրանալ:

Պէտք է գիտակցիլ որ նոյնիսկ երբ անձ մը ուղղակի եւ բացառապէս օգնութիւն խնդրէ մեզմէ, մենք պէտք է ամէն միջոցի դիմենք զայն անողորակիօրէն կատարելու համար:

Ընդհանրապէս մարդիկ հանգստացնելու լաւագոյն միջոցներէն է անոնց անդրադարձնել թէ նախապէս այլ մարդիկ եւս գտնուած են նոյնքան ներդրողիչ կամ նոյնանման կացութիւններու մէջ: Այս գծով անձնական փորձառութիւններու նշումը կրնայ բաւական օգտակար դառնալ մեր ընկերոջ: Սակայն բոլոր պարագաներուն չէ, որ անձնական փորձառութիւններու նշումը դրական ազդեցութիւն կ'ունենայ անհատին վրայ:

Ճիշդ է, որ ցաւը, տառապանքը եւ նեղութիւնը համաշխարհային զգացումներ են, սակայն կարգ մը պարագաներու անոնք այնքան իւրաքանչիւր կ'ըլլան որ զանոնք անտեղի է բաղդատել այլ նոյնանման կացութիւններու հետ: Այս պարագային է, որ անհատին հետ անձնական փորձառութիւնները բաժնեկցիլը կրնայ բնաւ օգտակար չըլլալ անոր:

Անձնական փորձառութիւններու նշումը երբեմն կրնայ պատճառ դառնալ, որ անհատը ենթադրէ թէ իր կացութիւնը անհասկնալի է ուրիշին կողմէ: Երբ որոշ կացութիւն մը բաղդատուի աւելի բարդ եւ դժուար կացութեան մը հետ, անհատը կը զգայ թէ իր պարագան սխալ կը գնահատուի: Թելադրելի է զգոյշ ըլլալ, որ մեր ընկերը կամ հարագատը չենթադրէ թէ մենք կը ջանանք իր հարցը ներկայացնել, որպէս մանր կամ անկարելի:

Հոգեբաններու համաձայն, յատկապէս լուրջ անհանգստութենէ տառապող անձերու պարագային պէտք է անոնց կացութիւնը բաղդատել աւելի վատ պարագաներու հետ, որովհետեւ այս մէկը կրնայ բարձրացնել անոնց անձկութիւնը (anxiety) եւ ճնշուածութիւնը: Նախքան անձնական փորձառութիւններու նշումը, պէտք է որոշել թէ ինչո՞ւ համար կը փափաքինք մեր պատմութիւնը բաժնել օգնութեան կարիքը ունեցող ընկերոջ կամ հարագատին հետ:

Վերջապէս, օգտակար դառնալու համար իւրաքանչիւր անձ պէտք է համոզուի, որ խօսքով կարելի է փոփոխութիւններ կատարել: Իսկական փոփոխութիւններ տեղի կ'ունենան լուրջ եւ գործնական աշխատանքներով: Բաւական հաճելի է խրատելը եւ խօսքերով անձ մը հանգստացնելը կամ մխիթարելը:

Կարգ մը պարագաներուն, խօսքերը իսկապէս օգտակար են, սակայն միշտ պէտք է ի մտի ունենալ որ անոնք բաւարար չեն արդիւնաւէտ օգնութեան կամ օժանդակութեան համար: Ամբողջական հոգատարութիւնը կը կատարուի գետնի վրայ ամբողջութեամբ արարքներով:

Թէեւ բոլորիս նպատակը կրնայ դրական եւ անմեղ ըլլալ մարդոց օգտակար դարձած ժամանակ, սակայն բոլոր պարագաներուն չէ որ մենք իսկապէս կը հասնինք մեր նպատակին:

Յաճախ տեղի կ'ունենան թիւրիմացութիւններ, նեղութիւններ, վիճաբանութիւններ որոնց հիմնական պատճառը կ'ըլլայ սխալ օգնելու միջոցներու որդեգրումը:

### ԻՆՉՊԵՍ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԻՆՔՆԱՎԱՍԱՀՈՒԹԻՒՆԸ

Մարդիկ կը տառապին ինքնավստահութեան պակասէն: Քիչ են այն մարդիկ, որոնց աւելորդ ինքնավստահութիւնը կը բխի անոնց գերազանց իմացութենէն եւ կայուն ներաշխարհէն: Հակառակը, բարձրահունչ եւ չափէն աւելի ինքնավստահ երեւցող մարդիկը կարելի է բաժնել քանի մը խումբերու: Մարդիկ ամենակարող հասարակական դիմակի ետին խնամքով կը թաքցնեն այն բաւական զգայուն եւ յաճախ վիրաւոր անձնաւորութիւնը, որ մարդոց մէջ աննկատ երեւալու համար կերտած է այդ իւրօրինակ վարագոյրը:

Քիչ չեն նաեւ անոնք, որոնց աւելորդ ինքնավստահութիւնը կու գայ պարզապէս հասարակական վարուելակերպի կանոններու բացակայութենէն: Մարդիկ անկաշկանդ են ոչ միայն այն պարագային, երբ գիտակցաբար յառաջ կ'երթան, բայց նաեւ՝ երբ չեն գիտեր սպասուող խնդիրներու իրական վտանգը, արժէքը կամ հետեւանքները:

Միւս կողմէ՝ յատկապէս կայացման տարիներուն, կը շատնան անոնք, որոնք, ըլլալով կիրթ, դաստիարակուած, գրագէտ ու ժուժկալ պատանիներ, շարունակ խնդիրներ կ'ունենան ինքնահաստատման եւ շրջապատի մէջ իրենց արժանաւոր դիրքը եւ տեղը գրաւելու համար:

Սեփական անձն ու հնարաւորութիւնները վերագնահատելը դիւրին չէ: Այստեղ շատ կարեւոր է մէկ կողմէն բացառապէս սեփական հնարաւորութիւններուն սահմանը, միւս կողմէն չանցնել այդ սահմանը:

### ՏԻՍԱ ԱՐԳԱՐ

ԻՅ՝ ճձՅ՝ իձՅ՝ իձՅ՝ 16-ՆԿ

Թէ ինչ կը գրէ ան Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե.-ին հասցեագրած իր նամակին մէջ. "Տիկին Տիանա Աբգարը, կ'ապրի երկրի մը մէջ, ուր օտարներուն համար ապրուստի բոլոր աղբիւրները գոց են: Ծնորհիւ իր լեզուագիտութեան եւ մտաւոր բացառիկ ընդունակութիւններուն, ան կրցած է հսկայական միջոցներ ստեղծել եւ հասարակութեան մէջ ակնառու դիրք գրաւել: Ան Հեռուոր Արեւելքի Տիրուհին է, որուն կը դիմեն ամէնքը": 1919-ին Տիանան մասնակցած է Խարբինի մէջ կայացած (Չինաստան) Միպիրի եւ Ծայրագոյն Արեւելքի հայերու համաժողովին, ուր զայն ընտրած են որպէս պատուոյ նախագահ: 1920-ի Յուլիս 2-ին Տիանա Աբգարը նշանակած են Հայաստանի

ու դառնալ ինքնասիրահարուած ու ինքնահաստատութեան եսակեդրոն մը:

Եթէ կ'ուզէք պահպանել ձեր իսկական դէմքը, ըլլալ ինքնավստահ, բայց նաեւ խոնարհ ու պարկեշտ, առաջին հերթին զերթին զերթիւն ինչպէս: Հաւատացէք, ձեր անձն ու վստահութիւնը բարձրացնելու միակ տաբերակը դիմացինի անձն ու հեղինակութիւնը նուազեցնելը չեն:

Ժպտացէք յաճախ: Ժպտան ու բարեհոգութիւնը ձեզ կը դարձնեն անասելիօրէն ձգտողական, կու տան վստահելիութեան զգացում: Պահպանեցէք խօսակցիցին հետ շփումը եւ անգամ երկխօսութիւնը աչքերու միջոցով, քանի որ նման շփումը կամ անոր բացակայութիւնը շատ բան կրնան ըսել ձեր իրական նկատառումներուն մասին:

Մի փորձէք ամէն ինչին հասնիլ արագօրէն եւ ամէն գնով:

Դուք կատարեալ չէք, այլ ընդամենը մարդ, սխալ ինչ ու սայթաքիլը նոյնպէս մարդկային են, հաւանաբար այսօրուան սայթաքումը վաղը պիտի ծառայէ իբրեւ ընկալուած խորհուրդ:

Դադրեցէք հետեւել մտապահել միայն վատ նորութիւնները: Ցնցող լուրերը նման են այն արագ ու անառողջ ճաշա-տեսակներուն, որոնց վտանգաւորութեան մասին մենք այնքան կը լսենք:

Փորձեցէք մարդոց հետ ըլլալ լաւատես: Ասիկա կապուած է առաջին պայմանի հետ: Միշտ չէ, որ պարզապէս արտացոլե-լով դիմացինին վարքը իր իսկ ուղղութեամբ՝ կը հասնիք յաջողութեան:

Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ եւ ամբողջ Ծայրագոյն Արեւելքի գլխաւոր հիւպատոս, ծափոնի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան: Անոր հովանաւորութիւնը վայելած են նաեւ Սինկափուրի եւ Ինտոնեզիոյ հայերը:

Ժամանակակիցներու վկայութեամբ՝ Տիանա Աբգարը եղած է զարգացած, կրօնասէր, գթաբար և յստակ գործող անհատականութիւն: Ան նաեւ շատ տպաւորիչ արտաքին ունեցած է ու անկասելի հմայք: Տարբեր սրահներու մէջ անոր մուտքը բոլոր ազգերու դիւանագէտները դիմաւորած են ոտքի կանգնելով:

Տիանա Աբգարը մահացաւ 1937 թուականի Յուլիս 8-ին, Երբոհամա: Անոր աճիւնը ամփոփ-ւած է տեղոյն օտարերկրացիներու գերեզմանատան մէջ՝ ամուսնոյն շիրիմին քով:

### ՃՈՐՇԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Նախորդ թիւով լոյս տեսած շրջանաւարտներու լուրին առթիւ Տէր եւ Տիկ. Օշին Քէշիշեան կը շնորհաւորեն շրջանաւարտներն ու անոնց ծնողները: Առ այդ 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

### ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Ս.Դ.Հ.Կ.ի կազմակերպած Ազգային Երգերու երեկոյնն իսանդավառութեամբ մի ոմն 200 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՐԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»ի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ալքիին եւ համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Յովհաննէս Պալայեաններուն:

### Թուրքիան առկախել է Հայաստանի հարցը ՄՍ-ում

ԹՅ ճձՕՄՅՅ Ի ձձՅՅ Ի չԸ 2-չՂ

րունակումը, յանուն Թուրքիայի հետ նշմարող հետաքրքրությունը շարունակելու: Այդ գործընթացը նրանց համար դարձել է շատ առեղի հեռանկարային ու հարուստ՝ ընդ որում անկախ Ազատ առևտրի ռեժիմի հաստատման նպատակից, այլ թէկուզ միայն գուտ որպես քաղաքական գործընթաց, տրենդ, որը կ'առաջարկուի աշխարհա- դաքական մրցակցությունում:

Այդ հեռանկարին է արձա- գանքում նաեւ Իրանը, ինտենսի- ւացնելով Հայաստանի հետ կապ- ուած իր տնտեսա-քաղաքական յայ- տարարությունները: Ռուս-թուրք- դազախական տարածաշրջանային

տրենդը Իրանին սպառնում է թող- նել լուսանցքում: Այդ իսկ պատ- ճառով Թեհրանը Երեւանին առա- ջարկում է հանդէս գալ այլընտ- րանքային գործընթացներով:

Բայց, առայժմ Երեւանի հա- մարձակությունը չի բաւականացնում ծայրայեղ ինքնապաշտպանությունից անցում կատարել ինքնիշխան նախա- ձեռնողականություն: Հայաստանն առայժմ կամ դեռեւս կարողանում է մերժել Ռուսաստանին այն, ինչ կը հանդիսանայ իշխանություն եւ պե- տություն վերջը: Բայց պետությունն զարգացման համար անհրաժեշտ հար- ցերում նախաձեռնություն համար- ձակություն կամ կարողություն Երե- վանը դեռեւս չունի:

«ԼՐԱԳԻՐ»

### ԿԱԶԱ ԿԱՍ ԻՆՉՈՒ ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՎԱԽՆԱՅ

ԹՅ ճձՕՄՅՅ Ի ձձՅՅ Ի չԸ 6-չՂ

գոռոզ եւ խտրականությունեան սկզբունքներով ապրող պետությունեան ձեւաչափին մէջ մոռնալով, որ այսօր անոր ցանած ատելություն հունտերը վաղը կրնան արեան հեղեղներու վերածուիլ ու վտան- գաւոր դարձնել իր ընդհանուր գոյությունը:

Երբ հակառակորդը չի վախ- նար կրակէն, հրթիռներու պայ- թումներէն, սովէն եւ մահէն ապա այն ատեն մտածելու տեղիք պէտք է ունենաս:

Իսկ դիմացը իսրայէլացի քա- դաքացին փաստօրէն կ'ապրի վա- խի եւ մեղք գործած մարդու մը հալածախտով: Այսօր ընթացող պա- տերազմը կրնայ փոքր կէտ մը ըլլալ այն երկար հակամարտու- թեան մէջ, որուն երկարատեւ ըլ- լալու պարագային իսրայէլ պիտի

յոգնի: Այլ հարց, որ իսրայէլի ղեկավարները այսօր միայն կը մտածեն հանգրուանային կարճ ու երեւութական յաղթանակներու մա- սին, որոնք խորքին մէջ պար - տությունաց հող պատրաստող կայա- րաններ են:

Իսկ պաղեստինցիներու մտա- ծելու ձեւին, անոնց առաջնահեր- թություններուն եւ պայքարի ելքե- րուն մասին կը դժուարանամ ար- տայայտուիլ, որովհետեւ ան, որ ամէնօրեայ ծարաւի, սովի եւ մահ- ուան սպառնալիքին տակ կը գոյա- տեւէ, իրաւունք չունի մտածելու տիւրկի մասին:

Ոչ ոք, պաղեստինցի ժողո- վուրդին խելք տալու իրաւունք ունի: Իսկ անոնք, որ կ'անտեսեն անոր ազատ ապրելու իրաւունքը, անոնք եւս ինչ որ տեղ նոյնիսկ իրենց լուծութեամբ մեղսակիցներ են:

### ԱՆԹԵՂՈՒԱԾ ՄՈՐՄՈՔԸ

ԹՅ ճձՕՄՅՅ Ի ձձՅՅ Ի չԸ 6-չՂ

կողմը՝ «ոչ»: Ուրեմն՝ ժողովուրդը ունեցաւ իր վճռորոշ խօսքը երկրին ճակատագրին առումով՝ խոյս տալով արիւնահեղությունէ, դեկավա- րություն կաշկանդումներէն եւ միջազգային ճնշումներէ: Վերջա- պէս, տազնապներու լուծման ընտրանքը եթէ բռնի ուժն է՝ ապա անմեղ զոհեր կը վճարեն զինը անոր՝ Կազայի նահատակ երեխա- ները վկայ...: Մինչ իմաստությունը՝ երկխօսություն կը թելադրէ:

Անցեալ շաբաթ, յուզաթաթաւ մթնոլորտի ներքեւ վերաթաղումը կատարուեցաւ 1974-ին կորսուած եւ միայն վերջերս աճիւնները

յայտնաբերուած յոյն կիպրացի զինուորի մը. մինչ՝ Նիկոսիոյ յունական կողմէն կ'երեւին հանդիպակաց զրաւեալ լեռներուն վրայ թրքական եւ ինքնակոչ Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետության սուկավիթխար դրօշակները լեռան լանջին սարքուած՝ յարատեւօրէն մորմո- քելով սիրտը կիպրացի ժողո- վուրդին: Անդին՝ կարգ մը տեղեր կարելի է տեսնել Կիպրոսի քարտէզը՝ բռնագրաւեալ մասը արնաշաղախ՝ ու տակը արձանագրուած՝ «Տէն Քսեխնօ» (չեմ մոռնար). որովհետեւ՝ բացուած վէրքը չի փակուիր: Մորմոքը կ'անթեղուի՝ բայց չի մոռցուիր...:

### ՑԵՂԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

ԹՅ ճձՕՄՅՅ Ի ձձՅՅ Ի չԸ 13-չՂ

Թաներ Աբջամը, լրագրող եւ հրա- պարակախօս Հասան ձէմալը (տիրահանգի երիտթուրք ձէմալ փաշայի թուրք), գրող Իլիֆ Շաֆա- խը, Րըճէպ Ջարագօղլուն, պատ- մաբան Հալիլ Պէրպալը, Օսման Գօպիրը, ձէնկիլ Ապդարը եւ շատ մը ուրիշներ, որոնք ջանք թափած են խօսքի ազատությունը ապահո- վելու համար Թուրքիոյ մէջ, եւ փոքրամասնություններու իրա- վունքները ապահովելու, պահան- ջելով անոնց առիթ տալ որ իրենց լեզուները եւ մշակութիւնը գար- գացնելով ազգային ինքնություն-

ները պահեն : Հայց ցեղասպանու- թեան ճանաչումը անոնց գլխաւոր արշաւն է: Սակայն կը թուի թէ այդ բոլորը իրականացնելու համար աւելի շատ աշխատանք պէտք է տարուի եւ տակաւին երկար ժամանակի կը կարօտի:

Թուրքիայն, որ կը հաստատէ իր մերժողական դիրքը պատմու- թեան հանդէպ, եւ կը վախնայ Հայց ցեղասպանություն վերա- բերեալ քաղաքական հետեւանքե- րէն, պետք է իր դիրքը փոխէ, հարտուի իր պատմություն հետ եւ ընդունի անոր սեւ ծալքերը ճանա- չելով Հայց ցեղասպանությունը, նմանապէս միւսներունը որպէսզի

### ՈՂՋՈՅՆ՝ ԱՍՔԱՆԱԶԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ԹՅ ճձՕՄՅՅ Ի ձձՅՅ Ի չԸ 17-չՂ

րից ամենահարազատն ու հայկա- զունը Մովսէս Խորենացի հայրե- նանուէր Արմինն է, որը անչափ սիրով, փառաբանումով ու տքնան- քով, հայրենաշունչ պաթոսով գրել է իր հայկազուն ցեղի յիշատակու- թեան արժանի մեծ ու փառաւոր գործերի պատմությունը: Երկար տարիների գուարթ աշխատանքով գրել է այն, ինչ նրան հասնելի է եղել: Ժողովրդական աւանդապա- տումներից քաղել ճշմարիտը, պատ- մել նախարարական տների ծա- գումնաբանությունը: Ժամանակի կղերականությունը հալածեց Մով- սէս Խորենացուն, պաշտօնանկ արե- ցին, թունաւորեցին, ոսկորտիքը գետ թափեցին, ջրերը այն իրենց ալեակների փերի վրայ պահած՝ ափ հանել հայոց առափնեայ հան- դեր: Արմէն-Հայ ազգի չորս «մե- ծուկներն են»-ից է արորդի Խորե- նացին, ինչպէս՝ Մեսրոպ Մաշտոցը, Խորենացին, Կոմիտասը, Անդրա- նիկը...:

Պարոյր Սկայորդի թագաւո- րի մահից յետոյ, մ.թ.ա. 630 թուա- կանին գահը ժառանգել է նրա որդի Հրաչեան: Ըստ Մովսէս Խո- րենացիի կազմած հայոց թագա- ւորների ցուցակի շարքի, նա հայոց աշխարհի երկրորդ թագաւորն է: Հրաչեան այն թագաւորն էր, որ Նաբուգոդոնոսորին խնդրել էր գե- րավարուած Հրեաներից Շամբաթ անունով իշխանին գերդաստանով յանձնել իրեն, որոնց շառաւիղնե- րից սեռել էին Բագրատունիները: Հին Յունական հեղինակներ Հրաչ- եային անուանել են՝ Մադիես: Ըստ Պատմագիր Հերոդոտոսի, մ.թ.ա. 625-624 թուականներին պարտություն է մատնել Ասորես- տանի մայրաքաղաք Նինուէն պա- շարած Մարաստանի բանակին, 28

տարի գերիշխել Մերձաւոր Արե- ւելքում: Դաշնակից երկրների զի- նակցութեամբ Ասորիք արշաւել, հարկ ստացել Եգիպտոսի թագաւո- րությունից, Փոքր Ասիայում ջախ- ջախել Կիմերական ցեղերին: Հայ- կական Լեռնաշխարհի տարածքում հաստատուած Ասքանազի սերունդ- ները դարձել են նստակեաց, կարճ ժամանակի ընթացքում աստիճա- նաբար ձուլուել աւելի բարձր մշա- կութային զարգացում ունեցող Ար- մինա երկրի տեղաբնիկների հետ, ընդունել նրանց բարքերը եւ լե- գուն: Այդ տեղաբնիկները Արմի- նա-Ուրարտու երկրի Արմիններն էին եւ ոչ թէ պատմաբանների շփոթած ուրիշ ցեղերը:

Հայկական Լեռնաշխարհի Արմինա երկրի տարածքում հաս- տատուած Ասքանազ անուանուած պետությունը շատ մեծ խորհուրդ է թաքցնում իր մէջ: Մովսէս Խորե- նացի հայոց պատմահայրը, Ասքա- նազի թագաւորութեան հիմնա- դիր՝ Սկայորդի իշխանի որդի Պարոյրի մասին ակնարկում է՝ 'Մեր բնիկ նախնի սերունդները թագաւորութեան աստիճանի են հասնում': Ուսումնասիրությունն անթ հանդիսացող շատ առատ հրատարակություններ կան Հայաս- տանի գրապահոցներում, պատմա- բաններ օգտագործելով լեզուա- կան, աշխարհագրական, պատմա- կան, մշակութային համեմատա- կան տուեալներ, կարող են ստույգ ապացուցել, որ Պարոյր թագաւորը եւ Մովսէս Խորենացու յիշատակած նրա յաջորդները Արմինա-Ուրարտ- ուի Արմէն քաջ արքաներն էին, ապացուցելով, որ կրակի երկիր իմաստով Ուրարտու անուանուած պետությունը Արմինների Արմինա պետությունը ու նրա արքաներն էին, 'Օն ընդառաջ'՝ասել էր ՄԵՄ ՄԱՐԴ Ղեւոնդ Ալիշանը:

### ԱՐՈՒԵՍԱԳԵՏ ԲԱՄԲ ԵՐԳԻՉ ԳԵՈՐԳ ԿԿՈՍԵԱՆ

ԹՅ ճձՕՄՅՅ Ի ձձՅՅ Ի չԸ 8-չՂ

եւ երգերու մեկնաբանություններով: Այս բոլորը համադրուած գեղարուեստական ոճով եւ բարձր ճաշակով:

Ուրեմն, հիմա որ ամէն ինչ պատրաստ էր խտասալիկին հա- մար, բայց, տակաւին երգերը կը կարօտէին վերջնական ճշգրտմնե- րու: Ուրեմն, գործը յանձնուեցաւ ձայնի եւ ձայնագրութեան մասնա- գէտի մը: Իրեն ներկայացուցեալ գործին երկու տարբերակները, որ- պէսզի կատարէ, համաձայն մեր ակնկալությունեան եւ ըստ իր մասնա- գիտական դատողութեան, ընտրու- թիւնը լաւագոյն ձայնագրութեան: Ապա լրացնէ ահրաժեշտ բոլոր ճշգրտմները, եւ պատրաստ է «Մէս- թըր»՝ խտասալիկի տպագրու- թեան համար: Տասը ժամուան աշխատանքէ ետք ունեցանք «Մայր Խտասալիկը» այսինքն «MASTER CD»-ին:

Եւ սկսաւ երգել Գէորգ Կակոս- եանը... Ան երգեց հայրենիքի եւ արտերկրի բեմերու վրայ, ռատիո-

յի եւ հեռատեսիլի կայաններէն, Երեւանի Օփերայէն, մինչեւ իսկ իր շունչը աւանդեց երգելով: Բայց դարձեալ երգեց իր տիտուր յուրար- կաւորութեան ընթացքին՝ թէ եկե- դեցիին եւ թէ այլ գերեզմանատան մէջ: Յաջորդ օր, անոր անդրշի- րիմեան ձայնը լսուեցաւ՝ Պէյրու- թի Իւնեսքոյի Սրահին մէջ, Կոմի- տասի Հարիւրամեակին նուիր- ուած հանդիսությունեան, որուն գլխաւոր աստղերէն մէկը պիտի ըլլար: Ապա, շարունակեց երգել Երեւանի Պետական Ռատիոյէն, հայ երգարուեստի վարպետներու շարքին: Շնորհիւ իր ձայնապնա- կին, երգեց ամենուրեք, տարբեր ռատիոհաղորդումներու ընթաց- քին եւ տուններու եւ սրահներու մէջ: Ահա այսօր, իր նոր խտա- սալիկով, բարձր պահելով հայ երգի եւ կատարողական արուես- տի մակարդակը, տակաւին ան կ'երգէ եւ պիտի երգէ հայ երգար- ուեստի վարպետներու կողքին, իր թովիչ ձայնին շքեղութեամբ, զգա- յուն եւ խորաթափանց մեկնաբա- նութեամբ:

Թուրքական առաջիկայ սերունդը հպարտանայ իր ազգով: Ատելու- թիւն պարունակող խօսքը թուրք- ական լրատուողական միջոցնե- րու մէջ, ատելութեան պատճա- ռով տեղի ունեցած յանցագործու- թիւնները (օրինակ, Հրանտ Դին- քի պարագան), փոքրամասնու-

թիւններու ունեցուածքներու բռնագրաւումը, Հայոց ցեղասպա- նություն ժխտումը եւ այլ ան- մարդկային միջոցառումները չեն կարող շարունակուիլ եթէ Թուրք- իան կը ցանկանայ մօտ ապագային մաս կազմել միջազգային ընկե- րություն:

### 2015 ԹՈՒՎԱԿԱՆԻՑ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԻՆՉ Է ԵՂԵԼ

ԻՅ՝ ճձՅՅ՝ ԻձՅ՝ ԻՅՅ՝ ԻՅՅ՝ ԻՅՅ՝

հայեր, հենց այդ ժամանակ է սկսում նաև «ներսի հայ» եւ «դրսի հայ» տարբերակումը: Այս մտայնութիւնն ունեցողները համար Թուրքիայում բնակուող հայերը «հաւատարիմ էին», իսկ արտերկրի հայերը՝ «դաւաճան», սակայն այս հարցի նախապատմութիւնը նրանց չէր հետաքրքրում, ոչ ոք չէր հարցնում, թէ այս մարդիկ ինչու են Լիբանանում, Փարիզում ծնւում-մեծանում, ինչու են գնացել Ամերիկա: Կարծես սփիւռքահայր այլ հայ է: Մինչդեռ այդ մարդկանց արմատներն այս հողերում են:

Թուրքիայի մամուլում Սովետական Ռուսաստանն ինչպէ՞ս է արտացոլում:

**Ա.Ն.-** «1965 թ. միտինգ է» յիշատակում: Սովետական Հայաստանում ամենամեծ ցոյցն է լինում, տասնեակ հազարաւոր մարդիկ են մասնակցում: Բնականաբար, մասնակիցները թիւը քննարկման ենթակա է. հայկական աղբիւրներն ասում են հարիւր հազարաւոր, ռուսական աղբիւրներն ուրիշ թիւ են նշում: Ցոյցը Օպերայի հրապարակում է տեղի ունենում: Քանի որ այդ ժամանակ մէկ այլ ազգի գրպարտելը կամ ազգայնականութիւնն արգելուած էր, այլ ուղիներ են փնտրում, օրինակ՝ 1965 թ. միտինգի ժամանակ առաջ են քաշում «Մեր գոհերին ոգեկոչելու համար յուշարձան ենք ուղարկում» պահանջ Միտինգը Միլվա կապուտիկեանի եւ Պարոյր Սեւակի առաջնորդութեամբ է տեղի ունենում: Ցետապարտում Մոսկուան չի մերժում, կապուտիկեանին եւ Սեւակին Մոսկուա են կանչում, որտեղ պահանջին հաւանութիւն են տալիս, եւ սկսում է ցեղասպանութեան յուշահամալիրի շինարարութիւնը, որը աւարտին է հասնում 1967 թ.: Սակայն պէտք է նշել, որ ցեղասպանութեան առաջին յուշարձանը բացուել է 1965 թ.՝ Երեւանում. դա Գաղի գործարանի մօտ կառուցուած աղբիւրն է: Թաղի բնակիչները ցանկանում են գումար հաւաքել եւ յուշարձան կառուցել, որի վրայ ծրագրուած է գրել «1915 թ. թուրքերի կողմից սպանուած հայերի յիշատակին»: Սակայն երբ աղբիւրի նախագիծը հաստատման համար ներկայացնում են քաղաքապետարանի համապատասխան բաժնին, վրայի գրութեան համար նախագիծը չի հաստատուում: Մի քանի փորձից յետոյ ասում են, որ եթէ այդ գրութիւնը նախագիծից հանեն, կը հաստատուի: Նրանք էլ հանում են, նախագիծն անմիջապէս հաստատուում է, եւ բնակիչներն սկսում են գումար հաւաքել: Քանի որ այդ ժամանակ մեծ փողեր հաւաքելն արգելուած էր, կոպեկ են հաւաքում: Գումարը հաւաքում եւ աղբիւրը կառուցում են: Ապրիլի 23-ին ասում են. «Մէկ է, ոչ մէկը չի տեսնի», եւ գրում. «Ցեղասպանութեան ժամանակ սպանուած հայերի յիշատակին»: Ապրիլի 23-ի երեկոյեան ամէն ինչ պատրաստ էր արդէն: Այս աղբիւրի մասին մեզ «Ակոս» թերթի հայերէն էջերի պատասխանատու եւ գրող Սարգիս Սերոբեանը պատմեց: Հայաստանի մեր ընկերներն էլ գնացել եւ նկարել են. իրօք, մինչեւ հիմա կանգուն է եւ վրան է այդպէս է գրուած: Ահա առաջին յուշարձանն այդ է: 1965 թ. նաև Արգենտինա-

յում է յուշարձան բացում, իսկ Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրը բացում է 2 տարի անց՝ 1967 թ.:

Ըստ Թուրքիայի մեդիայի՝ Սովետական Ռուսաստանն ինչպիսի՞ն է, օրինակ՝ Թուրքիայի հայերին յաւել եւ հաւատարիմ՝ են բնութագրում, իսկ սփիւռքահայերին՝ յաւատ:

**Ա.Ն.-** Թերթերում չկայ մի բան, որը թիրախ ընտրէր Ռուսաստանին, միայն Մոսկուայում Թուրքիայի դեսպանատան առջեւ կատարուած ցոյցի մասին լուր կայ: Ըստ էութեան՝ Ռուսաստանի հետ լաւ յարաբերութիւններ ունենալու համար Ռուսաստանին Սովետական Հայաստանին շատ չէ անդրադառնում: Օրինակ՝ Ամերիկան իմպերիալիստական երկիր լինելու համար աւելի մեծ վտանգ է ներկայացնում:

Եթէ մայեցը Թուրքիայի վարչապետի եւ արտգործնախարարի ելոյթներին, ապա իրենց ելոյթներում կարծես թէ ԱՆԿարան երեւանից որպէս կողմ չի տեսնում, անգամ վերջին ցաւակցական հաղորդագրութիւնն էր սփիւռքին ուղղուած, ձեր կարծիքով ի՞նչն է պատճառը:

**Ա.Ն.-** Կարող է լինել: Ըստ էութեան վերջին ցաւակցական ուղերձում անգամ ասաց «հիմա հերթը սփիւռքինն է»: Արտգործնախարարն էլ է Սփիւռքին դիմում: Դեռեւս ոչինչ չի փոխուել. Այն ժամանակ էլ էին Սփիւռքին դիմում, հիմա էլ: Անկարայի համար սփիւռքն էլ միատարր չէ: Օրինակ՝ արտգործնախարար Դաւութօղլուն ասում է. «Սփիւռքը միատարր կառուց չէ, այնտեղ կան ինչպէս ուշադրութեան արժանի մարդիկ, այնպէս էլ մարդիկ, որոնց հետ խօսել անկարելի է»: Յաւանական ուղերձից յետոյ առաջին հակադեցութիւնը եկաւ Ամերիկայի հայ ազգային կոմիտէի գործադիր տնօրէն Ա. Համբարեանից: Ճիշտն ասած՝ հետաքրքիր է, թէ ովքեր են այն հայերը, որ Թուրքիայի հետ կապեր են հաստատում: Ասում են, չէ՛, «Չեմ հայեր»: Ո՞վ է այդ մարդկանց ներկայացնում, միութիւն է, թէ՛ քաղաքապետ, հետաքրքիր է իմանալ: Անկարայի համար «վատ հայեր» դեռեւս կան: Այդ հայերն այնտեղ էլ կան: Ըստ Անկարայի՝ Գեզիի ղեկավարի ժամանակ ցոյց անող հայերը լաւը չեն:

**Ս.Ք.-** Թուրքիայի թէզի համաձայն՝ 1965 թ. այս ցեղասպանութեան հարցը մեր դէմ բարձրացնող ոչ թէ Հայաստանն էր, այլ՝ Սփիւռքը: Հայաստանը «լաւ» եւ «վատ» հայերի մէջտեղում է: Ըստ էութեան՝ սովետական շրջանում Հայաստանն անկախ ազգային պետութիւն էր, ընդհանրապէս Մոսկուային էին դիմում: Հայաստանին որպէս կողմ չի դիտարկում, որովհետեւ սփիւռքահայերը Թուրքիայի համար Հայաստանից աւելի գորեղ են: Այսօր Հայաստանն ի՞նչ կարող է անել Թուրքիային: Ո՞րն է Երեւանից Անկարային եկող հաւանական ամենամեծ սպառնալիքը: Տնտեսապէս որեւէ բան անելու ուժ չունի, քաղաքականութեան տեսանկիւնից կրկին սահմանափակ են հնարաւորութիւնները: Հիմնական ուժը Սփիւռքի ձեռքում է: Ֆրանսայում սփիւռքահայերի շնորհիւ ցեղասպանութեան հարցը Մինչեւ նախագահ Ֆ. Օլանդ է բարձրացում, Ամերիկայում ցեղասպանութեան մասին մեդիային խօսել ստիպողը, Օբամային նախընտրական քարոզարշաւում «Ցեղասպանութիւնը

ճանաչելու եմ» ասել տուող սփիւռքահայերն են, ոչ թէ Երեւանը: Հիմա եթէ սփիւռքահայերն այսօր անժեղ են, բնականաբար, Թուրքիան ոչ թէ Հայաստանին այլ Սփիւռքին է դիմում:

Վարչապետի կարիքներից եւ արտգործնախարարութիւնից հնչեցնող ուղերձներում մշտապէս այս հարցը պնդում են: Համաձայն պաշտօնական տեսակէտի՝ միջազգային հարթակում տեղի ունեցածը այս «վատ հայերն» օգտագործում են: Վարչապետի ցաւակցական ուղերձից անմիջապէս յետոյ արտգործնախարար Դաւութօղլուի պարզաբանման մէջ հետեւեալ միտքն է հնչում. «Մենք Երեւանի հետ հանդիպումներ ենք ունենում, որեւից» ինչի չունենք, կարողանում ենք Երեւանին համոզել, խօսել, սակայն Սփիւռքը չի համոզուում եւ Երեւանին պատին է դէմ տալիս»: Այսինքն՝ Թուրքիայի ընկալմամբ Երեւանն էլ է լաւը, կարող են նստել, խօսել, սակայն քանի որ Սփիւռքի ճնշում կայ, Հայաստանը չգիտի, թէ ինչ անի, երկու քարի արանքում է: Ըստ Անկարայի՝ քանի որ Հայաստանը ծանր տնտեսական կացութեան մէջ է, Սփիւռքի նիւթական աջակցութեան կարիքն ունի, հետեւաբար՝ ում մօտ որ փողն է, նա էլ ցոյց է տալիս ճանապարհը:

Այս տարի Ստամբուլում իրականացուած Ռայոց ցեղասպանութեան գոհերի ապրիլքսանդրութեան ոգեկոչմանը բազմաթիւ սփիւռքահայեր կային, սակայն կարծես թէ պոլսահայերը մեծ մասնակցութիւն չէին ցուցաբերում: Պետութեան գծած սահմանը չանցնելու վախի՞ց է, թէ մէկ այլ պատճառ կայ:

**Ա.Ն.-** Թուրքիայում մարդիկ դեռեւս վախենում են իրենց կեանքի համար: Պոսլահայերը երբեք քաղաքական հակադեցութիւն չեն ցուցաբերել: Անգամ երբ Հ. Դինքին սպանեցին, ոչ բոլորը փողոց դուրս եկան: Բոլորը դուրս չեն էլ գալ: Եթէ 45 հազար հայ կայ, հազիւ 20 հազարը դուրս գալ: Ահա այդ կէսից էլ ապրիլ քսանդրութեան ոգեկոչմանը եկող մարդկանց ձայնը, ըստ իս, աճում է: Անցեալի հետ համեմատած՝ այս տարի ե՛ւ կազմակերպիչների, ե՛ւ մասնակիցների շարքերում աճող այս ձայները տեսալ: Հայերն ամբողջութեամբ կազմակերպչական գործերին չեն մասնակցում, որովհետեւ, կարծում եմ, եթէ հայերը կազմակերպեն, ապա այլ ձեւով պէտք է ոգեկոչեն: Իրօք, Թաքսիմի հրապարակում պէտք է թուրքերը ոգեկոչեն: Տարբերութիւն չեմ տեսնում Թուրքիայում եւ Սփիւռքում անցկացնող ոգեկոչումների միջեւ: Ինչպէս որ Սփիւռքում են գնում եւ Թուրքիայի դեսպանատան առջեւ գոռում «Մարդասպան Թուրքիա», այստեղ էլ պէտք է գոռալ: Ի՞նչ է, այստեղ «Մարդասպան իրողան» չե՞ն գոռում: Եթէ խօսքի ազատութիւն կայ, ապա այս ցոյցերը պէտք է ազատ իրականացնել: Կարծում եմ՝ այս պահին Թուրքերի եւ քրդերի ազատ արտայայտուելու տեղն է, իսկ հայերն էլ պէտք է ասեն «Տես, մեզ համար են լացում»: Ես այսքան անձայն ցոյց չեմ ցանկանում, որովհետեւ սիրտս այրուած է: Պապիս սպանել են ասելով՝ ոչ թէ լացում եմ, այլ բարկացած եմ: Չգիտեմ, թէ այս խօսքի ազատութիւնը, որն այսօր Թուրքիան ունի, իրողանի՞ շնորհիւ է, կամ էլ ա՛յն կէտն է, որին Թուրքիան պարտադրուած է հասել, բայց օրէցօր աճում է:

**Ս.Ք.-** 2007 թ. փոքրամասնութիւնների հոգեբանութեան աշխարհում շրջադարձային էր: Առաջին անգամ այս հողերում ոչ մուսուլման մէկին սպանեցին, որի թաղման արարողութեան մարդկային հոծ զանգուած մասնակցեց: Հրանտ Դինքի սպանութեան մասին լսելով՝ բոլորն իրենց տներում վախի զգացումով պատուեցին, յետոյ էլ՝ Ջիրվէի սպանութիւնը. շատ մութ շրջան էր: Հետեւաբար մարդիկ այս լուրն առնելուն պէս մտածում էին դուռ-պտուհանը փակել, ոչ մէկի հետ չխօսել, սակայն այդ հսկայական զանգուածը տեսնելով՝ մարդիկ մտածեցին, որ այս երկրում կան մարդիկ, որոնց հետ մէջք մէջքի տուած կարելի է կանգնել. դուրս գալու եւ խօսելու ժամանակն է: Բայց նշածս երկուութիւնը դեռեւս կար: Այս երկրի մարդիկ չեն վստահում այս հողերին: 2004-2005 թթ. ԵՄ-ին ինտեգրուելու գործընթացն էր, իսկ 2007 թ. էլ քրիստոնեաների սպանութիւնները տեղի ունեցան: Այս երկրում մակընթացութիւնները շատ են: Թէեւ 2-րդ սահմանադրական շրջանում բոլորը գոռում էին՝ «Մեզանից իւրաքանչիւրը քաղաքացի է», սակայն շատ չանցած տեղահանութիւններ սկսեցին: Այդ իսկ պատճառով մի կողմից բոլորը գոտեպնդում են, օրինակ՝ միասին կարողանում ենք մեր ձայնը բարձրացնել, Թաքսիմում էլ ոգեկոչմանը գնալ, սակայն միւս կողմից էլ մտահոգութիւն կայ, թէ նորից խաւար շրջան կը գալ, թէ՛ ոչ: Հիմա չեմ կարծում, թէ ամբողջութեամբ վտանգն անցել է: Ե՛ւ ես, ե՛ւ իմ շրջապատը դեռեւս տագնապներ ունենք: Օրինակ՝ թաղամասում, որտեղ ես եմ ապրում, հարեւաններս անգամ Բերքին էլ վախի ցոյցերին մասնակցելու վերաբերեալ ասում էին՝ «Որդի՛ս, Աստուծոյ սիրուն, այս երկրում իրավիճակը չլարենք, այդպիսի բաների մի մասնակցէք, ցոյցերը վերջում մեր գլխին են ջարդելու», որովհետեւ Թուրքիայում միշտ էլ սա է եղել:

Եթէ 10 տարով յետ գնանք, ապա այսօրուայ Թուրքիայում որոշ հարցեր շատ աւելի հանգիստ են քննարկուում, բազմաթիւ տարուներ են ջարդուել, ըստ ձեզ Թուրքիան, այն կէտից, որին հասել է, յետ քայլ կարո՞ղ է կատարել:

**Ս.Ք.-** Թուրքիայում առաջընթացը մշտապէս Մեհթեր (ենիչերիները նուազախմբի քայլերդ-Ա.Ք.) քայլերգի նման է եղել՝ 3 քայլ առաջ, 2 քայլ յետ, նորից 3 քայլ առաջ, իսկ թէ երբ այդ 2 յետքայլը կը լինի, երբեք չեն իմանալ:

\*\*\*\*\*

Սերդար Քորուշու - CNN Turk-ում աշխատում է որպէս խմբագիր: «Ռադիօյալ», «Ակոս», «Էքսպրես» եւ «Բիրգիւն» թերթերում լուրեր է պատրաստել, յօդուածները լոյս են տեսել «Թաքսիմ» թերթում եւ «Միլլիյեթ»-ի գրքերի մասին յաւելուածում: 2009 թ. «Գիւնջել» հրատարակչութիւնը հրատարակել է Ս. Քորուշուի «Քրդական հարցն ըստ օտար լրագրողների», իսկ 2014 թ.՝ «Միլիան հողին հաւասարութիւնը յետոյ»:

Արիս Նալըր-IMC հեռուստարկերութեան լուրերի բաժնի տնօրէնն է, ինչպէս նաև պատրաստում է «Կամուրջ» հաղորդումը: Գրում է T 24 կայքում: Նրա յօդուածները լոյս են տեսել «Ակոս», «Բիրգիւն», «Էլ-րենսել», «Օզգիւրգյուլում», «Ռադիօյալ» եւ «Ջաման» թերթերում: